


9(47.925)
4-47

инициалы, ф

2403

1939



9(47-925)

Գ-47 ԳԵՂՋԻ ՄԵՄՐՈՊ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՏԱՐՐԱԿԱՆ Բ. ՏԱՐԻ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2004



12012

ՏՊԱՐԱՆ «ՄԵՄՐՈՊ»

ՔԱԽԵԼՈՎԾՈ ԱՌՖԻՍ

1934

2658 ՏԵԽՆ.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ՏԱՐՐԱԿԱՆ Բ.)

Ա. Գ. Ա. Ա.

ԱՐՄԵՆԱԿ

Սիրելի մանուկներ,

Դուք արդէն զիտէք թէ մեր աղջին նա-
պետը եղած է Հայկ, որուն անունով մեր
ողովորդը կոչուած է Հայ, իսկ մեր երկի-
ւ՝ Հայաստան :

Դուք զիտէք նաև թէ Հայկ մեծ պատե-
սլմ մղեց թէլի գէմ, անոր յաղթեց և զայն
աննեց. ան երկար տարիներ խաղաղ կերպով
ուսավարեց իր երկիրը և մեռաւ:

Հայկ ունեցաւ շատ որդիներ. այդ որդին-
երէն մին էր Արմենակ :

Իր հօրը մեռնելէն ետքը Արմենակ իր եղ-



5809-56

բայրներուն տուաւ Հայկաւէնը, որ իր հօրը շիւնած զիւղն էր: Ինքն աւ առաւ իր ընտանիքը և զնաց դէպի հիւսիսային արեւելք:

Նա անցաւ բարձր Լեռներու միւս կողմը, տեսաւ ընդարձակ հովիտ մը, տարածուած էր արեմուտքէն արեւելք:

Դաշտը շրջապատուած էր Լեռներով. անոնց սոսորուէն կը բխէին մաքուր աղբիւրներ և կը կաղմէին բազմաթիւ ձորեր և զետակներ:

Գետակները հեղութեամբ կը սահէին Լեռներու տակէն, դաշտի եզերքներէն և վերջը իրար խառնուելով կը դառնային մեծ զետ: Գետը հետզհետէ լայնաւով ոսկիէ գոտիի մը պէս կ'երիւրէր դաշտին մէջ:

Դաշտին մէկ կողմը երիտասարդ Լեռներու մէջ ծերունիի մը պէս նստած էր սպիտակավառ ձիւնապատ լեռ մը: Ան բուսած էր երկի գալիքապատ լեռ մը: Պատասխն է ան: Պաւցած էր իր գագաթը. Մասիսն է ան:

Անոր դէմ, դէպի հիւսիս, լայն փոռւած էր ուրիշ ձիւնապատ լեռ մը, որուն զագաթը էր ուրիշ ձիւնապատ լեռ մը, որուն զագաթը էր սպիտակավառ ձիւնապատ լեռ մը: Արմերարձի վրայ զբուած թագի նման էր: Արմերարձի վրայ զբուած թագի հովիտ, անցաւ մեծ նակ իջաւ այդ լայն հովիտը, անցաւ մեծ զետին միւս ափը և բնակեցաւ հիւսիսային եղանակ:

Իր անունով լեռն անուանեց Արագած, իր բնակած աեղն ալ կոչեց Արագածուն:



Արագած լեռը

Այդ դաշտին մէջ նո զտաւ նախապէս հոն ապրող մարդեր և զանոնք հնագանդեցուց:

ՀԱՐՅՈՒԹԱՆ. — Հայեր որդիին անունն ի՞նչ էր. — Արմենակ որո՞ւ տաւ Հայկաւնը, ինչ ո՞ւր զնաց. — Առջեր ի՞նչ եւնա. — Լեռներու տակին ի՞նչ կը բխէին. — Հիւսիսային կողմի լեռը ի՞նչ կոչեց. — Եր բնակոծ երկրին անունն ի՞նչ դրաւ:




Բ. Դ Ա. Ս

ԱՐՄԱՅԻՍ ԵՒ ՇԱՐԱՅ

Արմենակ ունեցաւ որդի մը, որուն անունն
էր Արմայիս:

Արմենակ շատ բարի նահապետ մը եղաւ
և խաղաղութեամբ կառավարեց իր երկիրը,
շինեց զիւղեր և աւաններ:



Արմայիրի քլուրը

Հօրը մահէն ետքը գետի ափին վրայ գըտ-
նուած քլուրի մը վրայ շինեց աւան մը, ո-
րուն անունը դրաւ, իր անունով, Արմայիր:

Արմայիր աւանը յետոյ ընդարձակուեցաւ

և ամուր քաղաք մը դարձաւ . հոն մինչեւ ան-
գամ թագաւորներ կը նստէին:

Արմայիս ունէր թոռ մը , որուն անունն
էր Արատ . այդ թոռան անունով գետը ան-
ուանեց Երասի:

Արմայիս ունէր շատակեր որդի մը, անոր
անունն էր Շարայ , որ ունեցաւ շատ զաւակ-
ներ: Արմայիս Շարայի և անոր ընտանիքին
համար բնակելու տեղ տուաւ Արագածի միւս
կողմը, այն բարեբեր և արգաւանդ դաշտը ,
որ մինչեւ հիմայն շանաւոր է իր առաստ հունձ-
քերով: Շարայի անունով այդ բերրի դաշտը
կոչուեցաւ Շիրակ:

Անոր շատակերութիւնը շատ նշանաւոր
էր. հայ գիւղացիները երբ շատակեր մարդու
մը հանդիպէին , կ'ըսէին.

« Թէ քո Շարայի որկորն է ,

Մեր Շիրակայ ամբարքն չեն : »


« Երէ ու ուկոր Շարայի ուկորն է , մեր
ամբարները Շիրակի ամբարները չեն » , այսինքն
թէ մենք քեզ պահելու համար Շիրակի ամ-
բարները չունինք:

ՀԱՐՄԱՆԱՆ . — Արմենակի որդիին անունն ի՞նչ էր . — Ար-
մայիս ի՞նչ էինեց . — Գետին անունն ի՞նչ դրաւ . — Արմայիսի
Տղուն անունն ի՞նչ էր . — Շարայ ինչո՞վ նշանաւոր էր . — Ար-
մայիս ո՞ր երկիրը տուաւ անոր եւ ի՞նչ կոչուեցաւ այդ երկիրը . —
Գիւղացիներն ի՞նչ կ'ըսէին երէ շատակեր մը տեսնէին :

Գ. Գ Ա. Ա

ԱՄԱՍԻԱՅ ԵՒ ԳԵՂԱՄ

Արմայիս ուրիշ որդի մըն ալ ունէր : ա-
նիկա ամէնէն մեծն էր իր որդիներուն մէջ :
Անոր անունն էր Ամասիայ :



Ամասիա


Արմենակի , Արմայիսի և Ամասիայի ժա-
մանակներուն ամէն նահապետ իր կալուածը
կամ երկերը կուտար երէց որդիին , իսկ միւս

որդիներուն համար ալ իր ողջութեանը նոր
հողեր գտնելով կը շէցնէր : Ամասիայ ինքն
ալ այսպէս ըրտւ :
Ամասիայ ունէր երէց որդի ժը , որուն ա-
նունն էր Գեղամ :




Մասիս լեռը

Գեղամին թողուց Արևոյրը որ իր կալ-
ուածն էր և փոքր տղաքները առաւ , Երասիսի-
միւս կողմը տարտւ : Հոն անոնց համար գիւ-
ղեր շինեց որ այնտեղ ապրին :
Մեծ լեռներն ալ իր անունով կոչեց
Մեծ Մասիս և Փոքր Մասիս : իսկ Մասիսի
դաշտն ալ անուանեց Մասիսուն :
Գեղամն ալ իր հօրը մահէն ետքը եղաւ



Գեղամայ ծովակը

Նահապետ: Արմաւիրը տուաւ իր որդի Հարմային և ինքը գնաց գէպի վեր, գէպի արսելք:



Գեղամայ ծովի ձուկ

Անցաւ լեռ մը և հասաւ անուշ ջուրով ծովակի մը քով. այդ ծովակին մէջ կան բազմաթիւ կարմրախայտ ձուկեր, որոնք շատ սիրուն և համեզ են:

Գեղամ լեռան անունը դրաւ իր անունով՝ Գեղ, ծովն ալ կոչեց Գեղամայ ծով, որ կոչուած է նաև Սեւանայ ծով: Ծովակին մէջ կըղզի մը կայ, ուր հիմայ կը գտնուի վանքը մը:

ՀԱՅՑԱՐԱՆ. — Արմավիրի ո՞վ յաջորդեց . — Հին ատեն նահապետները որո՞ւ կուսային իրենց կալուածը. — Ամասիա որո՞ւ տուաւ Արմաւիրը եւ ինք ո՞ւր զնաց . — Լեռան անունը ի՞նչ դրաւ . — Քաջը ի՞նչ կոչեց. — Գեղամ ո՞ւր զնաց . — Ի՞նչ դրաւ այն ծովակին անունը . — Անոր մէջ ի՞նչ կը զսնուի:



Դ. ԴԱՍ

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ (1)

Սիրելի՝ մանուկներ,

Դուք լաւ զիտէք որ մենք ունեինք Արա

(1) Արա Գեղեցիկի աւանդավէպին այս վարիանդը, թէև շատ մը կողմերով կը տարբերի մեր աւանդական զրոյցէն, բայց մենք անհրաժեշտ նկատեցինք քանի մը դասով ներկայացնել զայն: Այս փափոխակը շատ պէտք պիտի ըլլայ քննական հայ պատութեան մէջ, ուր ունինք երի կամ Արախի մը յիշատակութիւնը, որուն համար կ'ըսուի թէ հայ էր:

Գեղեցիկ անունով նահապետ մը , որ պատեշ-
րազմեցաւ Շամիրամի հետ և սպաննուեցաւ :

Այսօր ես ձեզի պիտի պատմեմ ուրիշ
Արա Գեղեցիկի մը պատմութիւնը , որ քիչ մը
նման է մեր Արայի պատմութեան :

Հատ զարեր առաջ Բարելոնի մէջ թագա-
ւոր մը կար : Նա առիւծի պէս քաջ էր , և սուրը
ձեռքը կը պաշտպանէր իր երկիրը :

Սակայն օր մը կուրացան անոր աչքերը ,
անոր բազուկներուն ոյժը սպառեցաւ և ստիպ-
ուեցաւ թողուլ պատերազմի դաշտը :

Հատ բժիշկներ եկան զացին , շատ կախարդ-
ներ փորձեցին իրենց հնարագիտութիւնը , բայց
բան մը չկրցան ընել :

Յուսահատնատած էր թագաւորը իր գահին
պատած էին զայն :

Յանկարծ ներս մտաւ ալեզարդ ծերունի
մը , խոնարհեցաւ անոր առջև և ըստաւ .

— Թագաւորն ապրած կենայ , ես գտայ աչ-
քերուդ գեղը . այդ միայն Շամիրամ թագու-
հիին մօտ կը գտնուի : Վան շատ հեռու տեղ
չէ , մէկը զրկէ որ բերէ . այդ գեղը պիտի ըլ-
չէկէ քեզ և երիտասարդացնէ :
— Գիտար գեղ առաջարկեցիր , ուղ ծերուկ ,

պատասխանեց թագաւորը , չե՞ս գիտեր որ ես
և Շամիրամ թշնամի եղած ենք , միթէ յայտ-
նի չէ որ Շամիրամ կ'ուզէ իմ որդիս , Արա
Գեղեցիկը յափշտակել : Ո՛չ , ո՛չ , հեռացի՛ր ,
Շամիրամ ինձի գեղ չի տար :

Դուրս ելաւ ծերունին յուսախար , տխուր :
Ծերուկը երբ հեռացաւ , Արա Գեղեցիկը ,
թագաւորի կրտսեր որդին , ան որ չնարի հա-
սակ ունէր և նազելի գէմք , իր հօրը առջե-
խոնարհեցաւ և ըստաւ .

— Թոյլ տուր ինձի , հա՛յրիկ , որ ես եր-
թամ Շամիրամի մօտ . ե՛ս միայն կարող եմ այդ
գեղը անկէ իւլել :

— Ո՛չ , ո՛չ , պատասխանեց թագաւորը , աչ-
քերուս լոյսը կորսնցնելէս յետոյ , կեանքիս
յոյսն ալ չեմ ուզեր կորսնցնել : Շամիրամի
ճանկն իյնալէդ ետք այլես չես կարող վե-
րագառնալ :

— Երգում կընեմ քեղի , հա՛յր , որ եթէ
աստուածները զիս չմեռցնեն Շամիրամի սու-
րով , պիտի վերագառնամ աչքերուդ գեղով :
Օրհնէ զիս , առուր սուրով :

— Օրհնութիւնս քեղի պահապան ըլլայ
և արքայական սուրս քեղի պաշտպան : Գնա՛
և մի՛ մոռնար քու երգումդ :

Համբուրեց Արա իր հօրը ձեռքը , առաւ
արքայական սուրը , կապեց մէջքին և դուրս
թռաւ:

Անոր երկու եղբայրներն ալ ետևէն դա-
ցին , չուզելով ետ մնալ իրենց եղբօրմէն :

ԱՍԲՅԱՐԱՆ . — ՄԵՐ ԱՐԱ ԳԵՂԵԳԻԼՐ ՈՐՈՇ ՈՐԳԻ ԵՐ . —
Այս Արան որո՞ւ որդի եր . — Բարելոնի քազաւոր ի՞նչ եղաւ
— ի՞նչ բաւ ծերունին . — Թազաւոր ի՞նչ պատախանեց .
Ենչո՞ւ ժիշեցաւ ծերունին . — Արա ԳԵՂԵԳԻԼ ի՞նչ բաւ . —
Հայրն ընդունեց . — Արա ի՞նչ երդում տնաւ . — Հայրն ի՞նչ
բաւով օրնեց . — Երկու եղբայրներն ինչո՞ւ միասին զացին:


Ե. Դ Ա. Ա

ԱՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՔԱԶՈՒԹԻՒՆԸ

Երեք եղբայրները ճամբայ ինկան ու
զացին : Գացին գացին , շատն ու քիչը Աստ-
ուած զիտէ , վերջապէս հասան բերդի մառջն :

Բերդին չորս կողմը պտտեցան , նայեցան
և ահսան որ դրան վերև պատշզամ մը կայ ,
որուն վրայ լոյսի կտոր աղջիկ մը նստած է :

Զայն տուին և խնդրեցին որ դուռը բա-
նայ և Աստուծոյ ճամբորդները ներս առնէ ,
Հանգստանալու տեղ տայ :



Առաջին բերդը

— Հեռացէք այս տեղէն , զոչեց աղջիկը ,
եթէ թանգ է ձեզի ձեր կեանքը . Հիմա ուր է
ուր չէ կուգայ ^{ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԱԿԱՆԻ ՏՈՎԱԿԱՆԻ} տէր դեւը և
ձեզ բոլորդ ալ կ'ՀՅՈՒԿԱԿՈՒՐԾՆ :

580956

Հ. Ա. ՄԱՏԻԿԱՆԻ
ՏԵՐ Ա. Ա. ՄԱՏԻԿԱՆԻ

— Հոդ մի՛ ըներ , պատասխանեց Արա ,
դուռը բաց , մեղ պաշտպանելը մեր դորձն է :
Աղջիկը դուռը բացաւ , ներս առաւ զա-
նոնք և արտասուելով պատմեց թէ գեւը փախ-
ցուցած է զինքը և բանտարկած է այս ամա-
յի բանտին մէջ :

— Այսօր ո՞ր կողմը զնաց , հարցուց Արա
Գեղեցիկ :

— Դէպի արեւմոտք , ըստ աղջիկը , որուն
անոնք Խազալ էր :

— Ուրեմն արեւելքէն պիտի գառնայ ,
հաստատեց Արա :

— Այո՛ , արեւելքէն , պատասխանեց Խազալ :

— Լաւ , ըստ Արա , երթանք , քիչ մը հաց
տուր մեղի որ տաենք , իսկ դու բարձրացիր
պատշաճը , երբ որ նա գայ , մեղի իմացուր :

Խազալ զանոնք ներս տարաւ , սփռոցը փը-
ռեց , զանազան որսերէ կերակուրներ դրաւ ա-
նոնց առջև ու ինք բարձրացաւ պատշաճը :

Երեկոյեան երբ արեւ մայր կը մտնէր ,
Խազալ տեսաւ որ արեւելեան կողմէն ահազին

փոթորիկ մըն է փրթած և դէպի բերդը կու-
գայ : Իսկոյն իմաց տուաւ թէ ահա գեւը կու-

գայ : Արա առաւ իր հօր սուրբ , եր եղբայրնե-
րուն պատուիրելով հանգիստ նստիլ , ինքը

դուաւ թուաւ ու դիմաւորեց գեւը :

Սա զարմացած բացագանչեց . « Ես զացած
էի որս վինառելու , մինչդեռ որսն իր սուրով
իմ գուռն է եկեր : »

Բայց հաղիւ կրցաւ ձեռքը բարձրացնել ,
երբ Արայի սուրը շոզաց անոր գլխուն վրայ :
Խազալ տեսաւ որ գեւն երկու կտոր ըրած , Ա-
րա սուրը ձեռքը դէպի բերդ կուզայ : Ուրա-
խութեամբ վար վաղեց և ըստ :

— Ազատեցիր կեանքս , ես քու կինդ եմ :

— Ո՛չ , պատասխանեց Արա , դուն իմ մեծ
եղբօրս հարս պիտի ըլլաս , և անոր ձեռքէն
բռնեց ու մեծ եղբօրը տարաւ :

Նորէն Սփռոցը փոռեցաւ և ուրախութեան
աղաղակները մինչեւ լոյս թնդացուցին բեր-
դին ժայռոտ պարխապները :

Երբ լուսցաւ , Արա առաւ իր սուրը ու մի-
ջակ եղբօրը հետ ուղեց ճամբայ իյնալ : Մեծ
եղբայրը ուղեց միասին երթալ , բայց Արա
արգիլեց և ըստ :

— Կեցի՛ր և հարսին խնամք տար : Խազալ
նորէն փարեցաւ Արային ու լալազին ըստ :

— Թողաչքիս արցունքը կեանքդ փրկելու
պատճառ ըլլան . բարով երթաս , բարով զաս :

ՀԱՐՑԱՐԾՆ . — Արա եւ իր եւ այներ նամբան ինչի՞
հանդիպեցան , ի՞նչ պատմեց Խազալ . — Գեւը ի՞նչպէս սպան-
նուեցաւ եւ Խազալ որու հարան եղաւ :

Զ. ԴԱՍ

ԱՐԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱԶՈՒԹԻՒՆԸ

Երկու եղբայրները նորէն ճամբայ ինկան դաշտին: Շատ դաշտեր, բլուրներ անցան, ճամբայ կարեցին, վերջապէս հասան նոր բերդի մր դէմ: այդ բերդը փորուած էր հսկայ ժայռի մը մէջ:

Հոս ալ ժայռին զազաթը պատշպամ մը շինուած էր, որուն վրայ լոյսի կտոր աղջիկ մը կանգնած էր:

— Խե՛զճ մարդիկ, ձայն տուաւ աղջիկը, ինչպէս դուք ձեր ոտքով ինկեր էք այն զազան դեւին ձեռքը, որ զիս յափշտակեց հօրս դրկէն: Փախէ՛ք, աղատուեցէ՛ք, քանի ժամանակ կայ:

— Ի՞նչ ըան է այդ դեւը, ըստ Արա, եւ կուր դուռը բա՛ց, ես մէջոցը կը զանեմ. մեր կեանքն ալ կ'աղատեմ քուկն ալ: Իջաւ աղջիկը, դուռը բացաւ, ներս տանելով հիւրասիրեց: Երեկոյեան մօտ աղջիկն Արայի ըստ:

«Դեւին դալու ժամանակն է, ի՞նչպէս պիտի բարեկամանաս հետը»:

— Դուն պատշպամ ելիր և երբ դայ, ինձի իմաց տուր, ես բարեկամանալու եղանակը շատ լաւ զիտեմ:

Աղջիկը վեր ելաւ և քիչ ժամակէն եռք գոչեց: «Ահա դեւը սեւ ամպի պէս կուգայ»:

Արա իսկոյն սուրը մէջքը կապեց և դիբիմաւորեց դեւը եւ ըստ. Բարի լինի տեսութիւննիս, բարեկամ:

Դեւը կատղեցաւ և որոտաց: «Ով ես դուն, ստորին արարած, որ ինքինքն բարեկամ կը կոչես ինձի: շատ ժամանակ է որ մարդու միսին կարօտն եմ»:


— Բարեկամութիւնս չընդունեցիր, սուրը ընդունէ, ըստ Արա, և մէկ հարուածով երկու կտոր ըրաւ:

— Եթէ քաջ ես հարուած մըն ալ տուր, գոչեց դեւը:

— Մօրմէս մէկ անգամ ծնած եմ, հարուածըս ալ մէկ պիտի ըլլայ, պատասխանեց Արա, որովհետեւ եթէ երկրորդ հարուածը տար, դեւը նորէն կը կենդանանար:

Արիւնթաթախ սուրը ձեռքը վերադառնաւ Արա: զայն դիմաւորեց աղջիկը և համբուրեց:

անոր սիրտը : « Բախտաւոր էիր , ըստ Արա , և
ես կ'ուզեմ աւելի բախտաւորեցնել քեզ , այս-
ուհետեւ դուն իմ եղբօրը կինը պիտի ըլլաս» :



Փայտաբերդը

— Ի՞նչպէս եղբօրդ կինը , ես քու կինդ
ըլլաս կ'ուզեմ :
— Ո՛չ , պատասխանեց Արա , ինձի՞չի վա-

յելեր ամուսնանալ եղբօրին առաջ :
— Թող քու կամքն ըլլայ , ըստ ողջիկը :
Արա բերդ տարաւ զայն և տուաւ եղբօրը :
Ամբողջ գիշերը կերան , ուրախացան : Առ-
տուն Արա կ'ուզեր ճամբայ ելնել : Եղբայրը
պատրաստեցաւ անոր ընկերանալու :

— Ո՛չ , ըստ Արա , քեզի համար պակա-
սութիւն է , և ինձի համար ամօթ , որ դու ա-
մուսինդ և իմ հարսը մինակ ձգես և հետո զառ :
Եղբայրը հնազանդեցաւ : Աղջիկը համբու-
րեց Արայի սիրտը և արտաստելով ըստ :

— Աչքիս արցունքները թող լուսաւորեն
քու մութ ճամբան :

Արա բաժնուեցաւ և միայնակ ճամ բայ
ինկաւ :

ՀԱՅԱՐԴԱՆ . — Երկու եղբայրները ինչի՞ հանդիպեցան .
Այս անզամ ի՞նչ պատմեցան . — Արա ի՞նչ քու :




Է . Գ . Ա . Ա

Զ Ա Կ Ա Բ Բ . Ե Կ Ա Բ Ա

Միայնակ ճամբայ ինկաւ Արա գեղեցիկ
ու գնաց , գնաց , հասաւ հրաշալի մարզագետին
մը , որուն մէկ ճայրը , բլուրին վրայ , բերդ

Քը կը բարձրանար : Այդ բերդին քովերը կա-
յին ուրիշ բերդերու մնացորդներ : Արա մօ-
տեցաւ բերդին և տեսաւ դրան վերեւ , պա-
ռըշգամին վրայ լուսինի նման աղջիկ մը , ո-
րուն աչքերը կը փայլէին առառաւն Արուսեակ
աստղին պէս :



Զուարքի բերդը

Աղջիկը Արան տեսնելուն պէս , զոչեց .
— Խե՛ղճ երիտասարդ , ճամբաղ կորսնցու-
ցե՞ր ես , որ եկեր ինկեր ես դեւին ճանկը :
Շուտ հեռացիր այստեղէն և աղատէ՛ ինքինքդ
և իմ եանքը : Եօթը գլխանի դեր ուր է ուր
չէ կուզայ և մեծ կտորը ականջդ կը ձգէ :
— Շատ խօսիլ պէտք չէ , եկո՛ւր դուռը
բաց , ես գիտեմ քու դեին հետ վարուելուն
կերպը :
Աղջիկը դուռը բացաւ և հիանալով Արայի

գեղեցկութեան վրայ աղի արցունք թափեց ը-
սելով . « Ես մահը սիրով ընդունեցի , բայց ի՞նչ -
պէս այսպիսի երիտասարդ մը դեին կերակուր
պիտի դառնայ » :

— Ե՞րբ կու զայ այդ դեր , հարցուց Արա :
— Հիմակ ժամանակն է , որսի գացած է :
— Լա՛ւ ուրեմն , ես քիչ մը հանդստանամ .
իսկ դուն ելիր պատշաճը և երբոր զայ՝ ին-
ձի իմաց տուր :

Աղջիկը վեր ելաւ , սպասեց ու տեսաւ որ
դեւը կուզայ : Շուտով Արային լուր տուաւ :
Արա սուրը քաշեց և դուրս թուաւ : Դեւը երբ
Արան տեսաւ , ախորժակը զրդուուեցաւ , թու-
քը վաղեց բերանէն և այնպէս ակուները կը-
ճըրտեց , որ կարծես կայծակեց ու որոտաց :

Արա սարսափեցաւ , բայց ուժը հաւաքեց
վրան վաղեց ու իր հօրը թրի մէկ հարուածով
թոցուց դեւի եօթը զլուխն ալ : Իսկոյն ա-
րեան վտակներ սկսեցին հոսիլ , դեւը թաւալ-
ուլոր ինկած՝ զոչեց .

— Զա՛րկ , անզամ մըն ալ զարկ , որ մա-
հը շուտով անցնեմ :

— Մօրմէս մէկ անգամ ծնած եմ , հարուա-
ծըս ալ մէկ պիտի ըլլայ , պատասխանեց Ա-
րա և դարձաւ դէպի բերդը : Աղջիկը անոր

զէմ վազեց ու արցունքի փոխարէն մարզը իտ-
ներ թափեց աչքերէն։ Աւրախ զուարթ վերա-
դարձան բերդը, նստան հանգստանալու։

— Աղասիչս, ըստ աղջիկը, կ'ուզէի զիտ-
նալ թէ ո՞վ ես դուն, ի՞նչ է քու անունը։

— Ես Արամ թագաւորին որդին եմ և ա-
նունս Արա է, իսկ դու ո՞վ ես և ի՞նչ է քու
անունը։

Ես ալ Պռոշ թագաւորի աղջիկն եմ, ա-
նունս Զուարթ է, անօրէն գեւը զիս փախցուց
հօրս տունէն, բայց դուն լսած ես հօրս պատ-
մութիւնը։

— Ո՛չ, պատասխանեց Արա, չեմ լսած,
պատմէ՛ որ գիտնամ։

«Լաւ», ըստ Զուարթ և սկսաւ իր հօրը
պատմութիւնը։

ՀԱՐՑԱՐԱՆ. — Միայնակ ո՞ւր գնաց Արա. — Բերդը ո՞ւր-
կը գտնուէր. — Ի՞նչ ըստ աղջիկը. — Յրա ի՞նչպէս սպաննեց
եօթը զիսանի գեւը. — Աղջիկը ի՞նչ ըստ։



Ը. ԴԱ

ՊՐՈՇ ԹԱԳԱՒՈՐԻ ԹՈՒՐԸ

Զուարթն սկսաւ պատմել իր հօրը պատ-
մութիւնը։

— Հայրս, Պռոշ թագաւորը, պարզ բարդ
Քըն էր. նա կը բնակէր Մուշի Տօտերը, Մա-
նազկերտի բէջ։ Այս տեղ ծովակ մը կայ, փո-
քրիկ բայց շատ խորունկ։ Այս ծովակին բո-
ւորածիքը յաճախ կը շրջէր հայրս։

Անզար բը կը տեսնէ որ հովիւ մը գետնէն-
քար բը կ'առնէ և կը նետէ նախիրէն հեռացող
կովի բը վրայ. քարը կը ծակէ անոր փորը և
գետին կը գլորէ զայն։ Հայրս կը հասկնայ որ
գերբնական բան բը պիտի ըլլայ այս տեղ,
կը մօտենայ կենդանիի ինկած տեղին և կը
գտնէ քառակուսի երկաթի կտոր մը։

Կ'առնէ այդ երկաթը և կը տանի զինա-
գործին, որ թուր բը շինէ այդ երկաթէն։ Զի-
նազործը կ'առնէ, կը նայի երկաթին, և հաս-
կնալով անոր ինչ յատկութիւն ունենալը՝ կ'ըսէ։

— Եատ լաւ, կը շինեմ, դու զնա։
— Զէ՛, կ'ըսէ հայրս, իմ աչքիս առջեր-
պիտի շինես։
— Ի՞նչպէս կարող եմ աչքիդ առջեր շի-

նել, քանի որ ամբողջ շաբաթ Իր պիտի աշխատի մ վրան :

— Դէ՞հ, քանի որ այդպէս է, դիր իսկոյն հնոցը և այդ երկաթէն հերիւն Իր շինէ և ինծի տուր, շաբաթէն կուզամ սուրը կ'առնել :

Վարպետը ճարահատ՝ անոր ներկայութեանը հերիւն Իր կը շինէ և կուտայ: Հայրս հերիւնը կ'առնէ կ'երթայ: Վարպետը երեք թուր կը շինէ իրարու նման, մէկը հօրս տուած երկաթէն, իսկ միւսները ուրիշ երկաթէ: Ուրոշուած օրը հայրս կ'երթայ զինագործին մօտ և թուրը կ'ուզէ: Վարպետը հասարակ երկաթէ շինուած թուրը կը բերէ հօրս: Հայրս կը ճանչնայ և կը բարկանայ զինագործին վրայ, ցոյց տալու համար թէ չէ խարուած, հերիւնը կը խոթէ թուրին մէջ որ կը ծակի ու կը կոտրի: Վարպետը վերջապէս բուն թուրը կը բերէ, հայրս կ'առնէ ու կը մեկնի:

Այդ սուրին դէմ ոչ մէկ բան կը դիմանար: Նա կայծակի թուր էր, երկինքէն ինկած: Հայրս այդ թուրով Իեծ յաղթութիւններ կը տանի և կը դառնայ թագաւոր: Շամիրամ թագուհին, որ շատ թագաւորներու յաղթած էր, ուզեց այդ թուրն ունենալ, շատ անզամներ անոր դէմ պատերազմի ելաւ, բայց

չարաչար յաղթուելով ետ քաշուեցաւ:

Հայրս ունեցաւ զիս ու երեք եղբայրներա: Իմ գեղեցկութեան համբաւը նամիրամի ականջն հասաւ: Նա մտածեց զիս փախցնել հօրլու տունէն, յուսալով որ հայրս իրեւ փըրկանք կուտայ այդ թուրը և կ'աղատէ զիս: Այդ պատճառով կը կանչէ իր երեք գեւերը և խատիւ կը պատուիրէ, որ զան փախցնեն զիս:

Դժբախտ օրը՝ երբ ծովակին եղերքը կը ըղբօնէի, այս եօթն զլիանի դեւը եկաւ գրկեց ու փախցուց զիս, այս բերդը բերաւ: Հայրը արդէն ծերացեր էր, չկրնալով տոկալ այս վեշտին, սկսաւ տանջուիլ, մահուան օրերը մօտեցան: Օր մը կը կանչէ իր աղաքը և կ'ըսէ Տեծ որդիին. «Մահուընէս ետքը շատ կը ուիւներ կրնան ըլլալ ձեր թէջ, այս թուրի պատճառով, ուստի առ, տար ծովը ձզէ:


Եղբայրս զացեր է ծովին եղերքը, թուրը քարին զարկեր է, տեսեր է որ պանիրի պէս կը կտրէ. Տեղքցեր է ծովը ձգելու, քարի մը տակ պահեր է ու զացեր է հօրս Բօտ:

— Ի՞նչ եղաւ ծովը երբ թուրը ձգեցիր, հարցուցեր է հայրս:

— Բան մը չեղաւ, ըսեր է եղբայրս:

— Ուրեմն չես ձզած, զնա՞ իսկոյն ետ

բեր, պահանջեր է հայրս: Եղբայրս դարձուց
եր է թուրը: Հայրս միջնեկ որդիին յանձներ է զայն: Բայց ան չէ ձգեր: Այն ատեն



Պոռ բագաւորը թուրը կը յանձնէ:
Թուրը յանձներ է փոքր եղբօրս, որ նետեր է:
Զած ատեն ծովը կատղեր է և սկսեր է դէպի
երկինք նետել ձուկեր ու կենդանիներ: Հայ-

ըլս օրհներ է զայն: Թուրը ծով նետած օրը
ուրբաթ է եղեր, ուստի մինչև հիւակ ամէն
ուրբաթ ծովը կը կատղի. միւս օրերը խաղաղ է:
Ահա իմ հօրը պատմութիւնը, ըստ Զուարթ:
հիւակ կարգը քուկն է, պատմէ թէ ո՞վ ես:

— Իմ պատմութիւնը կարծ է, պատախանաց
Արա, ես Արամ թաղաւորի որդին եմ: Հօ-
րըս աչքերը կուրացած են, ըսին թէ միակ գե-
ղը ճամփամի ժոտ կայ, ուստի կ'երթամ ա-
նոր ժոտ այդ գեղը բերելու:

— Եամիբամի մօտ, բացազանչեց Զուարթ
վայ ինձ, դու այլ ես չես դառնար, զայն
տեսնելով կը բոռնաս զիս ալ, հայրդ ալ:

— Երբեք, պատախանեց Արա, թով վը-
կայ ըլլան ասուածները, որ նոյն իսկ Եա-
միբամ չկրնար խլել զիս քեզմէ: Դուն իմ
հարսնացուն ես, կը սպասես իմ դարձին :

ՀԱՐՅԱՐԱՆ. — Ի՞նչպէս պատմեց Զուարը. — Անոր հայ-
րը ի՞նչ տեսաւ ծովին բոլի: — Երկարը որո՞ւ տուաւ. — Զինա-
զործ ի՞նչ բռաւ. — Թուրը ի՞նչպիսի բան մըն եր. — Անով
ի՞նչ բռաւ Պոռ բազաւորը. — Եամիբամ ի՞նչ բռաւ. — Մեռնե-
լու ատեն Պոռ բազաւորն ի՞նչ բաւ իր որդիներուն. — Արա ի՞նչ
խոսում տուաւ Զուարի:



Թ. Դ Ա. Ա

ԾԵՐՈՒՆԻ ԿԱԽԱՐԴԸ ԵՒ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Առտուն կանուխ արթնցաւ Արա, պատրաստուեցաւ ճամբայ ելնելու: Զուարթ փորձեց զայն ետ կեցնել, բայց չկրցաւ: Այն ատենը ըստաւ.

— Գոնէ ինծի մտիկ ըրէ և ինչպէս որ ըստ ան ըրէ: Երեք օր քալելէն ետք, պիտի հասնիս լեռ ժը, որուն միւս կողմը վանի սահմանն է: Երբ լեռը բարձրանաս, մեծ ծառ՝ մը կը տեսնես, արմատին ժօտ սպիտակահեր ծերունի ժը նստած է: Զըլլայ թէ առանց այդ ծերունիին հետ ծանօթանալու անցնիս երթաս: Առաջ բարեւ տուր: Եթէ չառաւ, երկրորդ անգամ բարեէ: տեսար որ գարձեալ չառաւ, երրորդ անգամ բարեէ և հայր կոչէ զայն: Այս անգամ ալ եթէ չառաւ, բազուկներդ զօրացուր և նետուէ ծերունիին գիրկը, արմուկները բըռնելով՝ որքան ոյժ ունիս սեղմէ: Քաջ ես ու քաջ պիտի մնաս: Ծերունին ապշած պիտի խօսի հետդ և պիտի հարցնէ թէ ի՞նչ կը խնդրես: այն ատեն յայտնէ ճամբորդութեանդ նպատակը:

— Եատ լաւ, պատասխանեց Արա, մնաս բարով ըսելով ճամբայ ելաւ: Երեք օր քալելէն ետք, Զուարթի ըսածին նման, լեռ մը հանդիպեցաւ, տեսաւ ծառը և անոր տակ սպիտակահեր ծերունին: Երեք անգամ բարեւց. բարելը չառաւ ծերունին: Այն ատեն նետուեցաւ ու սեղմեց անոր բազուկները: Վերջապէս ծերունին խօսեցաւ.

— Ի՞նչ է խնդիրդ, ըսէ՛, քեզի պէս շատ երիտասարդներ եմ կորսնցուցած, միայն քեզ պիտի ազատեմ և խնդիրդ կատարեմ:

Արա պատասխանեց.

— Խնդիրս Շամիրամ թագուհիի մօտ հացնելն է, որպէս զի անոր քովէն բերեմ կուրացած հօրս աչքերուն դեղը:

— Դժուարին բան խնդրեցիր, պատասխանեց ծերունին. թռչունն իր թեսովը, օձն իր պորտովը չեն կրցած Շամիրամի երկիրը մտնել, որովհետեւ ինձ պէս 4 պահապան ունի իր սահմանին վրայ: Բայց ես քեզի խոստացայ չվենասել, գուն ինծի հետ քաղաքավար վարուեցար: Կը ներեմ քեզի որ իմ 3 ընկերներն ըստ պաննած ես: Մենք բոլորս ալ կախարդներ ենք և ինչ կերպարանքի մէջ ուղենք կը մտնենք: Հիմակ դուն ծառն ելիր և 40 տերե քաղէ,

Ազգ, Պատմ. Տարր. Բ.

բայց զգուշացիր տեղելի քաղելու և ինծի բեր տերեները:

Արա հնաղանդեցաւ, 40 տերե ժողվեց և բերաւ ծերունիին: Նա բոլորին վրայ փչեց ու տուաւ Արայի, որ ձախ ծոցը դնէ:

— Հիմակ, ըսաւ ծերունին, այ ձեռքովդ տերե թը հանէ, միայն չփախնաս. մտքէդ չար բաներ չանցնես, միայն սիրելիներդ յիշէ, չի խօսիս. այժմ դիրմէկ տերեւը շրթներուդ մէջ:

Արա տերեւ դրաւ շրթներուն մէջ և իսկոյն սկսաւ աշխարհը անոր աշքին առջեն անցնիլ. ահա իր հայրը Արամ, ահա եղբայրները՝ ուրախ զուարթ, ահա Զուարթը՝ տրտում տիտր: Արա ուղեց խօսիլ, բայց յիշեց ծերունիին պատուէրը և լոեց:

— Հիմակ ճամբան բաց է, ըսաւ ծերունին, քու առջեւ գնա՞՛, մէկ օր երթաւէն ետք կը քեզ և կաշխատին բռնել: Տերեւ թը հանէ ծոցէդ և շրթներովդ բռնէ, անոնք իրար պիտի խառնուին, քեզ վնառեն, գուն զանոնք պիտի տեսնես, անոնք քեզ չեն տեսներ: Մինչեւ վան հասնելու համար 7 կարդ պահապաններէ պիտի անցնիս: Երբ կը հասնիս բերդին, դրան ժողովու կը քը

աես, դուռը կը բացուի, պահապանները քեզ չեն տեսներ: Վեր կ'ելլես, Շամիրամի ընդարձակ պալատին սրահներէն կ'անցնիս, կը մըսնես ննջարանը: Շամիրամի պառկած տեղը, ոտներուն եւ սնարին մօտ մէյմէկ թանկագին քարի ջահեր վառուած են, իւրաքանչիւր քար իրեն յատուկ լոյսն ունի: Մի մօտենար անկողնին, ուղղակի գնա սնարին մօտ, տերեւով մը բաց այնտեղի արկղը, որ լի է թանկագին քարերով: Զեռք չդպցնես ոչ բէկուն: Այ կողմի դարակին մէջ է հօրդ աչքերուն գեղը, վերցուր զայն: Այնուհետեւ քու խոհերաժենէն է կախուած առանց ասդին անդին նայելու մեկնիլ, ոչ մէկ նշան չթողուլ անոր մօտ: Այս է ըսելիքս: Գնա՛:

ՃԱՐՑԱՐԱՆ. — Զուարք ի՞նչ խորհուրդ տուաւ. — Բարեւն առաջ ծերունին. — Արա ի՞նչ բրաւ. — Ի՞նչ խօսեցաւ ծերունին. — Տերեւներն ի՞նչ ընել երամայեց ծերունին. — Արա ի՞նչ տեսաւ. — Ի՞նչ պատուիրեց ծերունին:



Փ. ԴԱ.Ա

ԱՐԱ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Արա համբուրեց ծերունիին ձեռքը և ճամբարայ ինկաւ:

Անոր պատուէրներն ամբողջովին կատարելով Արա անցաւ բաղմաթիւ պահապաններու մէջէն, բաւառ Շամիրամի ննջարանը, բացաւ արկղը, հանեց իր հօրը աշքերուն դեղը, դոցեց անտուկը և կուզէր հեռանալ:

Աչքը հանգիպեցաւ Շամիրամի, որ անփոյթ կերպով ինկած էր անկողնին վրայ:

Անոր սակեթել մազերը զանգուրներ կազմած էին կարար ունքերուն և առաստութեամբ թափած էին անոր ուսերուն վրայ: Այտերը կարմիր մէյմէկ ինձոր, բերանը փոքր, շրթները՝ վարդի թեր:

Արա մոռցաւ ծերուկին պատուէրը. ծռեցաւ և համբոյր մը դրաւ անոր ճակտին, շտապով հեռացաւ: Շամիրամի մօտ մնաց իր ժամանին:

Հազիւ արշալոյսը բացուեր էր, երբ Շամիրամ սովորականէն կանուխ արթնցաւ: Կէս քուն կէս արթուն, մտատանջութեան մէջ ինքուն կէս արթուն, մտատանջութեան

կաւ. իրեն կը թուէր թէ թէկը մօտեցած է իրեն: իսկոյն ելաւ անկողնէն. կանչեց իր քառասուն նաժիշտները. բարկացաւ և ըստ: — Ո՞վ է բաեր այս զիշեր իմ սենեակը: Բոլորը իրարու երես նայեցան ապշած: Թագոհին հրամայեց ջուր բերել լուացուելու համար: Անմիջապէս ականակուռ սափորով ջուր բերին և Շամիրամ մկսաւ լուացուիլ:

Երբ կը լուացուէր, յանկարծ տչքին զարկաւ Արա Գեղեցիկի մատանին, որուն վրայ զլուած էր. « Արա Գեղեցիկ որդի Արամ՝ թագաւորի »:

Իսկոյն արիւնը զլուխը ցատկեց. ան գոչեց. — Ուրեմն ան էր որ տեսայ. այն ինչ թռչուն էր, որ ձեռքէս փախցուցի:

Ապա խիստ հրաման արձակեց, որ բոլոր շօրքը պատրաստուի Արամ թագաւորի վրայ պատերազմի երթալու:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Արա ի՞նչ բռա ննջարանին մէջ. — Նամիամ ի՞նչպէս դէմք ունէր. — Արա ի՞նչ բռնուց նոն. — Առաւոս ի՞նչպէս իմացաւ Շամիրամ եւ ի՞նչ նռամայեց իր զօրերուն:



ԺԱ. ԴԱ. 0

ԱՐԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արա , Շամիրամի ննջարանէն մեկնելէն հետքը շուտով գնաց , հասաւ ծառին տակ նըստած ծերունիին մօտ :

Սա բարկացաւ Արային և ըստ .

— Դուն չկատարեցիր իմ պատուէրը , դունքու ծեռքովդ նշան ձգեցիր : Ատով ոչ միայն քեզ , այլ և զիս վտանգի ենթարկեցիր : Շամիրամի զօրքերը երկու օրէն հոս կը հասնին . փախիր որ ազատուիս . ես ալ այս լեռներուն մէջ կը պահուիմ :

Արա Գեղեցիկ մէկ ոտքը երկուք ըրաւ գեշեր ցորեկ քալելով գնաց հեռացաւ :

Առտուան արեւը ծագած ժամանակ հասաւ մօտեցաւ Զուարթի բերդին : Զուարթ տեսաւ որ իր սիրելին կը վերադառնայ , գէմ վազեց , զրկեց և համբուրեց զայն : Եկան տուն :

Հազիւ քիչ մը հանդատացեր էին , Արա ոտքի ելաւ ըսելով .

— Այս ուրախութիւնը տեւական չէ , պէտք է շուտով մեկնինք այս տեղէն , հաց ուտելու ժամանակ չկայ :

Զուարթ ուրախացաւ որ զինքը հետ պիտի տանի , աճապարելուն պատճառն անդամ չյարցուց : Արեւը մարը չմտած ճամբայ ինկան :

Գիշեր ցերեկ ճամբայ կտրելով հասան նախ միջակ , ապա աւագ եղբօր բերդը և անոնք ալ հետ առնելով ճամբան շարունակեցին :

Վերջապէս հասան իրենց քաղաքը : Արամթագաւորը տխուր նստած էր , երբ ներս մտաւ Արա : Վազեց , զրկեց իր հայրը և գոչեց .

— Աչքիդ դեղը բերած եմ , թող որ բժշկեմ :

Անմիջապէս դեղը քաեց աշքերուն : Վայրկենաբար աչքերը բացուեցան , երիտասարդացաւ , աշխոյժ եկաւ վրան :

Ուրախացան բոլորը : Ամբողջ երկու երեք գիշեր ուրախութեամբ անցուցին : Առտու մը երբ դուրս նայեցան , տեսան որ ըրջակայ լեռները զինուորներով լեցուած են : Շամիրամթագուհին եկեր էր պաշարելու իրենց բերդը :

Հայր և որդի սկսան խորհիլ թէ ինչ պիտի ընեն :

— Առ դարձեալ թուրս , ըստ հայրը , անցիր զօրականներուս զլուխը և զնացանոնք մեր ազատ լեռներէն հեռացուր :

Արա Գեղեցիկ անմիջապէս իր զօրքերը կանչեց , կարգի դրաւ և յայտնեց որ կար կը

բեռնին կամ Շամիրամը կը քշեն:

Այն օրը ամբողջ պատրաստութիւններ տեսան և իրիկուան դէմ յանկարծ յարձակեցան Շամիրամ թագուհին զինուորներուն վրայ: Արա Գեղեցիկ չարդելով թշնամիները քշեց շատ հեռու, օրերով հալածեց մինչեւ վանի առհամնները:

Ախլաթի մէջ Շամիրամ նոր զինուորներ ալ ժողվելով նորէն ետ գարձաւ և հրամայեց Հայոց ամբողջ բանակը սրէ անցնել, և ըստ:

— Միայն չսպաննէք զօրքին պետք, «Պերկար մաղերով, բարձահասակ և աննման երիտասարդ Ի՞ն է, այլ ողջ ողջ իմ քու բերէք:

Պատերազմն սկսաւ: Աչքերն արիւն լեցուած կը կռուէին, առանց նկատելու թէ ո՞վ է ապրուզը, ո՞վ է մեռնողը:

Այս իրարանցման մէջ ինկաւ Արա Գեղեցիկ: Անոր զօրքը կատաղութեամբ ոկուաւ արեան վրէժը լուծել, բայց շուտով յուսահատած թողուց պատերազմի դաշտը:

Պատերազմի դաշտը անթիւ զիակներ լեցուցած էին: Շամիրամ անհամբեր կ'սպանէր որ իր զինուորները ուր է ուր չէ Արա Գեղեցիկը կը բերեն իրեն, բայց անոր յոյսը պարապը ելաւ: Աչ ոք կըցաւ տեղեկութիւն տալ

Արայի ժամին:

Աստի ինքն անձամբ ուզեց շրջիւ պատերազմի դաշտը և իմանալ թէ Արա մեռած է թէ փախած է:

Անցաւ հազարաւոր զիակներու մէջէն, թըստ արիւնի առուակներու վրայէն, կանգնեցաւ զիակի մը առջե, նայեցաւ և հառաջեց,



Արա Գեղեցիկի դիակը եւ Շամիրամ հրամայեց որ պալատ տանին:

Խոկոյն կատարեցին անոր հրամանը: Թագուհին Յօր շարունակ նստած Արայի զիակին մօս, կը զրկեր զայն և կ'ողբար: Ապա աչերը ծով կտրած հրամայեց որ տանին թաղեն:

Եւ մեծ պատիւով թաղեցին Արա Գեղեցիկը:

ՀԱՐՑՈՐԱՆ. — Ի՞նչ քառ ծերունին Արայի. — Արա ի՞նչ խօսեց Զուարին. — Նայն ի՞նչպէս աղեցուց. — Շամիրամ ի՞նչ քառ. — Արա ի՞նչ պատուիրեց իր զինուուներուն. — Ուրեղաւ մեծ պատերազմ. — Շամիրամ ի՞նչ պատուիրեց իր զինուուներուն. — Շամիրամ ի՞նչ քառ Արայի դիալին վրայ:



ԺԲ. Դ Ա. Ա

ԶԱՐՄԱՅՐ

Սիրելի՝ աշակերտներ,

Եղի այսօր պիտի պատմեմ սիրուն և նշանաւոր պատմութիւն մը:

Գիտէք, Յոյները մեղի նման աղգ մընեն: Անոնց պապերը շատ խելացի մարդեր էին անոնք կը կոչուէին Հելլէններ:

Հելլէնները կ'ապրէին ծովեղերեայ երկիր մը և կղղիներուն մէջ: Հին Հայերուն պէս շատ մը աստուածներ կը պաշտէին:

Հին Յոյները թագաւոր մունէին, որուն կինը Հելլէն կը կոչուէր. Նա շատ գեղեցիկ էր:

Պոլիսի Քոտերը, Տարտանելի եղերքը, երկիր մը կար, որուն թագաւորը Պատիս անուն տըղայ մը ունէր: Պարիս անդամ մը Յոյներու թա-

գաւորին հիւր կ'երթայ և տեսնելով Հելլէններ գեղեցկութիւնը զայն կը համոզէ և իրեն հետ կը փախցնէ:

Այս բանն իմանալով բոլոր Հելլէնները կը բարկանան և պատերազմ կը հրատարակեն Պարիսի դէմ:

Իրենց նաւերը և զինուորները կը պատրաստեն, կը յարձակին Պարիսի հօրը քաղաքին վըրայ: Տասը տարի կը տեւէ պատերազմը. Պարիսի Հայրը, Եղբայրը և ուրիշ շատ քաջեր կը դիմադրեն:

Այդ քաջերուն մէջ Հայոց քաջ նահապեան ալ կը զանուէր: Զարմայն էր ան:

Զարմայր բարեկար էր Պարիսի հօրը հետև երբ լսեց թէ Հելլէնները յարձակած են անոր դէմ եւ ան իր օգնութեանը կը կարօտի, պատրաստեցաւ երթալ օգնելու: Կարգի դըրաւ իր զինուորները և զնաց:

Հայերու քաջ նահապեաը հասաւ իր բարեկամին, սկսաւ իր զինուորներուն հետ կոտորել անոր թշնամիները: Հելլէնները Զարմայրը եւ անոր քաջերը տեսան, սկսան փախչել:

Հելլէններուն մէջ հերոս իշխան մը կար. անոր անունն՝ Այլիլէս: Անոր ոյժը սարսափելի էր: Կ'ըսէին թէ աստուածները անոր օգնականն էր:

էին պատերազմի մէջ, թշնամիին նետերը չէ-
ին մաներ անոր մարմինէն ներս:

Աֆիլլէս երբ լոեց Զարմայրի անունն ըս-
կառ մտածել, ան միտքը գրեր էր չպատե-
րազմիլ. Հելլէններու թագաւորը բարկացու-
ցեր էր զայն, բայց երբ շատ աղաչեցին, գլ-
նաց կռուելու Զարմայրի դէմ:



Զարմայր կ'պահմուի Աֆիլլէսի
Զարմայր երբ Արփլլէսը տեսաւ, լորեց իր
աղեղը, նետեց իր նետը, որ զնաց զարմուեցաւ
հերոսի կուրծքին:
Բայց անոր կուրծքը ծածկած զրահը թող

չտուաւ. նետը զարմուեցաւ և գետին ինկաւ,
առանց վնասելու:

Արփլլէս կառքը դարձուց եւ նետով ժը
գետին տապալեց Զարմայրը: Անոր մահը մեծ
ցաւ պատճուռեց բոլոր Հայերուն եւ Պարիսի
հօրը, որ փառաւոր թաղում կատարեց անոր:

Զարմայրի մահէն յետոյ ուրիշ շատ իշ-
խաններ աւ բեռան եւ Հելլէնները յաղթող ե-
լան:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Հին Յոյներն ի՞նչ կը կոչուէին. — Ի՞նչ
էր անոնց բազաւորի կնոջ անունը. — Ո՞վ էր Պարիս, ի՞նչ բառ
· — Զարմայրը ինչո՞ւ օգնեց Պարիսի հօրը. — Զարմայր որմէ
սպաննուեցաւ:



ԺԳ. ԴԱՍ



ՊԱՐՈՅՐ

Ասորեստանի արևելեան կողմը երկիր մը
կար, ուր կը բնակէին Մարերը կամ Մեդացի-
ները: Մեդացի նիւքարի երկիրն էր առ:

Այդ երկիրն թագաւորն էր Կիստաւ: Նա
իր զինուորները կանոնաւորեց: Իր խորաման-
կութեամբ և խելացութեամբ բարեկամ եղաւ

Իրեն մօտ զտնուող իշխաններուն հետ:
Բարեկամ եղաւ նաեւ Հայոց նահապետին
հետ: Մեր քաջ նահապետն էր այդ ժամանակ
Պարոյ իշխանը, որ շատ խելացի մէկն էր:



Պարոյ առաջին բագաւոր Հայոց
Կիաքսար և Պարոյը, Բարելոնի իշխանին
հետ, յարձակեցան Նինուէի վրայ, պաշարեցին
և դրաւեցին:
Պարոյը Կիաքսարի հետ մէկտեղ կոռւած

Ալլալուն համար թագաւորական թագ ընդու-
նեց Մարտասանի թագաւորէն և Հայոց առա-
ջին բագաւոր եղաւ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պարոյ որո՞ւ նետ բարեկամացաւ . — Կի-
աքսար ո՞ր ժողովուրդին բացաւուն էր . — Կիաքսար եւ Պարոյ
ի՞նչ ըրին Նինուէն . — Պարոյ ի՞նչ պարզեւ ընդունեց Կիաքսա-
րէն:

X Ժ.Դ. ԴԱՍ

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ

Պարոյը յետոյ իններրորդ թագաւորն էր
Երուանդի որդի Տիգրան: Սա մեր թագաւոր-
ներուն արէնէն զօրաւորը, ամէնէն իմաստու-
նը և քաջն էր:

Մեր պապերն ու զուսանները այսպէս կը
նկարագրէին Տիգրանը.

Սնոր մազերը շէկ էին և գանգուր, երեսը
զուարթ, սպիտակ ու կարմիր, աչքերը ժպտուն,
կազմը ուժեղ, թիկնեղ, ազդրերը լեցունկեկ,
պարկեշտ էր ան ու չափաւոր՝ ամէն բանի մէջ,
թէ կերուխումի և թէ զուարճութիւններու մէջ:

Նա ամէնուն վրայ հաւասար կը նայէր, արտար էր ու զթած:



Տիգրան Երուանդեան

Տիգրան լաւ բարեկամ էր նաեւ Պարսից
կիւրոս թագաւորին հետ:

Մարաց Աժդահակ թագաւորը կասկածով
կը նայէր Տիգրանի և կիւրոսի բարեկամութեան
վրայ: Նա միշտ կը մտածէր թէ չըլլայ որ
Տիգրանն ու կիւրոսը միասին իր վրայ յար-
ձակին:

Աժդահակ իմացեր էր որ Տիգրան իր զօր-
քը կարգաւորած է ձիաւոր կամ հեծեալ զին-
ուորները զատ, հետևակները, աղեղնաւորները
զատ, սուսերաւորները, վահանակիրները բազ-
մացուցեր է:

Աժդահակ անոր այս ոյժէն կը սոսկար և
ամէն ժամանակ կը խորհէր կիւրոսի և Տիգրա-
նի բարեկամութիւնը քակել ու մեծ մատան-
ջութեան մէջ էր:

Գիրշեր մը սոսկալի երազ մը տեսաւ, տե-
ղէն վեր թռաւ ու կէս զիշերին իր մօտ կանչեց
խորհրդականները: Անոնք հաւաքուեցան տեսան
որ թագաւորը տրաում տիսուր կը մտածէ:

Հարցուցին պատճառը, պատախան չտը-
ռաւ. բայց վերջապէս սկսաւ պատմել:

— Այսօր երազիս մէջ իրը թէ անձանօթ
երկիր մը կը գանուէի. ինձի ըսին թէ այդ եր-
կիրը Հայաստանն է: Բա՛րձը լերան մը քով
կը գտնուէի:

Այդ լերան գագաթին նստած էր զեղեցիկ
կին մը, որ ծիրանի հազած էր՝ քողն երեսին:
Եւ երբ հիացած կը նայէի, տեսայ որ կինը
ծնաւ երեք կարիճներ: Անոնցմէ առաջինը առ-
իւծի մը վրայ հեծաւ ու թռաւ դէպի արե-
մուտք. երկրորդը ինձի մը վրայ նստաւ և դի-
Ազգ, Պատմ. Տարը. Բ.

մեց դէպի հիւսիս . իսկ երբորդը ահազին վիշտապ մը սանձած՝ յարձակեցաւ իմ տէրութեան վրայ:

Յանկարծ ինքղինքս զտայ իմ պալատի տանիքին վրայ: Հոն կանգնուած էին մեր աստուածները , իսկ ես ձեզի հետ զոհ կը մատուցանէի և խունկ կը ծխէի:

Մէկ մալ նայեցայ որ վիշտապին վրայ նստողը , արծիւի նման թեեր առած , դէպի ինձ կը թռչի և կ'ուզէ աստուածներս կործանել : Աստուածներուն և անոր միջև նետուեցայ , հարուածն ես ընդունեցի , սկսանք կռուիլ : Արիւնը սկսաւ հոսիլ և տանիքը ներկուեցաւ :

Այս սոսկալի կացութեան մէջ արթնցայ և տեսայ որ սաստիկ քրտնած եմ : Զեզ կանչել տուի որ ինձի խորհուրդ տաք :

Այսպէս պատմեց Աժդահակ և սպասեց որ խորհրդականներն իրենց կարծիքն ըսեն : Գալ գասին կը տեսնենք թէ ինչ խորհուրդ ըրին :

ՀՈ.ԲՅ.ԲՈ.Ն . — Ո՞վ եր Տիգրան , ի՞նչպէս մարդ եր . — Ի՞նչ բարեկամուրիւներ քառ . — Արո՞ւ բարեկամ եր . — Ո՞վ եր Կամականքին մէջ ո՞ր երկիրը կը գտնուէր Աժդահակ . — Աժդահակ . — Երազին մէջ ո՞ր երկիրը կը գտնուէր Աժդահակ . — Առաջին սղան ինչի՞ վրայ նասած եր . սկզբ բանի՞ սղան ծնա . — Առաջին սղան ինչի՞ վրայ նասած ո՞ւր գնաց . — Երկրո՞րդը . — Երրո՞րդը . — Աժդահակ իր սամիկին վկայ ի՞նչ կը բանէր — Ո՞վ յարպուցաւ : Երբոյիմ . գալուն

ԺԵ. ԴԱ.Ա

× ԱժԴԱՀԱԿ ԵՒ ՏԻԳՐԱՆՈՒՆԻ

Աժդահակ և իր խորհրդականները մտածեցին և որոշեցին Տիգրանը խարդախութիւնով սպաննել կամ թունաւորել :


Աժդահակ նա մակ մը զրեց Տիգրանին : Անդրած էր . « Սիրելի երայրութիւնդ գիտէ որ աստուածներն օգտակար բան մը սորվեցուցած են մեղի , այն է՝ իմաստուն բարեկամներու թիւը շատցնել : Եթէ բարեկամանանք մէծ օգուտներ ձեռք պիտի բերենք , ուստի կը խընդրեմ որ ինձ կնութեան տաս Հայոց Օրիորդը , Քոյրդ՝ Տիգրանուհին : Ան իմ քոտ պիտի ըլւայ թագուհիներու թագուհի : Ողջ եղիր , մեր թագակիր և սիրելի եղբայր : »

Տիգրան այս նամակն առնելով բան մը չի կասկածիր և իր քոյրը կը զրկէ Մարաստան : Աժդահակ սիրով ընդունեց Հայոց օրիորդը և կարգեց Տիկիններու Տիկին :

Օր մը Աժդահակ Տիգրանուհին իր քովն չըսաւիրելով ըսաւ .

— Դուն չես գիտեր ո՞րչափ նախանձուտ է Տիգրանաթիվին մաքանչ քրծած առաջնորդ չէ Տիգրանաթիվին մաքանչ քրծած առաջնորդ չէ

քու տիկնանց տիկնութեանդ վրայ և մեր գէմ
գու տիկնանց տիկնութեանդ վրայ և մեր գէմ



Ամդանակ Տիգրանուհին կ'ընդունի
գաւոր ըլլայ ան և ինքն ալ թագուհի : Ի՞նչ
պիտի ըլլայ ասոր վերջը : Հնար մը գտիրայր
խայտառակութեան վերջ մը դնելու համար :

Տիգրանուհի շուտով հասկցաւ Աժդահակի
միտքը : Միամիտ ձեացաւ ան սիրոյ խօսքե-
րով հաւատացուց Աժդահակը իբր թէ ինքն ալ
այդ լուրէն վշտացած է և միջոցներ կը մտա-
ծէ եղբօրը և ջարուհին ծուղակէն աղատելու

Հարաբ:

Բայց զաղտնի կերպով, մտերիմ մարդու
ձեռքով իմացուց իր եղբօրը՝ Աժդահակի չար
դիտաւորութիւնը :

ՀԱՐՑԱՐԱՆ . — Ամդանակ Եւ իր խորհրդականները ի՞նչ խոր-
հեցան . — Ամդանակ ի՞նչ նամակ գրեց Տիգրանի . — Ամդանակ
ի՞նչպէս ընդունեց Տիգրանուհին . — Օր մը ի՞նչ խօսեցաւ Ամդա
նակ . — Տիգրանուհի հասկցա՞ւ անոր չար միտքը, ի՞նչ յրաւ :



ԺԶ. ԴԱ. Ա

ՏԻԳՐԱՆԻ ԵՒ ԱԺԴԱՀԱԿԻ ԿՐԻՒԾ

Աժդահակ մարդ զրկեց Տիգրանին ու ըստաւ .

— Շուտով եկուր զիս տեսնելու մեր եր-
կիրներուն սահմանագլուխի մօտ, շատ կարե-
ւոր ըսելիքներ ունիմ :

Տիգրան իմացաւ Աժդահակի չար նպատա-
կը, անմիջապէս ընտիր գունդեր կազմեց, զին-
ուորներուն զէնք տուաւ և գնաց Մարաց աշ-
խարհին վրայ :

Տիգրան կը խորհէր իր քրոջ Տիգրանուհիի
մասին . կը մտածէր թէ ի՞նչպէս ազատէ :

Հնարքով մը քոյրը աղատելէ ետք արձակ

Համարձակ առաջ զնաց, կոռուեցաւ Աժդահակի
զինուոյններուն հետ և յաղթելով անոնց շատն
սպաննեց, շատերն ալ փախցուց:

Աժդահակ այդ պատերազմին մէջ մեռաւ
Տիգրանի նետի հարուածէն: Այսպէս ինկաւ
Մարաց տէրութիւնը: Աժդահակի առաջին կի-
նը՝ Անոյշ և Աժդահակի ցեղէն բազմաթիւ աղ-
ջիներ ու պատանիներ գերի ինկան Հայոց ձեռ-
քը: Տիգրան իր սիրելի, գեղեցիկ և իմաստուն
քոյրը բնակեցուց իր շինած Տիգրանակերտ քա-
ղաքին մէջ: իսկ Աժդահակի գերիները բնա-
կեցուց Մասիսի մօտելը:

Աժդահակի ամբողջ երկիրը Տիգրան թո-
ղուց իր բարեկամ կիւրոսին, որ Պարսից թա-
գաւորն էր և միասին յաղթած էին Մարաց:

Տիգրան հարուստ երկիր մը դարձուց Հա-
յաստանը, մեղք ու կարազով կերակրեց մեծն ու
պղտիկը. անոր օրով հայ ժողովուրդը երջանիկ
էր: Ապա մեր հայրերը միշտ երանի կուտա-
յին անոր օրով ապրողներուն և կ'ըսէին.
— Երանի թէ մենք անոր ժամանակ
Ճնած Ըլլայինք:

ՀՅ.ԲՅ.ԲՐԱՆ. — Աժդահակի ի՞նչ գրեց Տիգրանի. — Տիգրան
ի՞նչ քրաւ. — Յաղթեց, իր բնյու ո՞ւր բնակեցուց. — Ո՞վ եր Կիւ-
ռոս, Մարաստանը որո՞ւ տրւեցաւ. — Հայոց վիճակն ի՞նչպէս էր:

ԺԷ. ԴԱ. Ս

ՎԱՀԷ ԵՒ ԱՆԵՔՍԱՆԴՐ

Զարմայրի նման ուրիշ իշխան մըն ալ
ունեցած ենք: Անոր անունն էր Վահէ:
Վահէ Զարմայրի պէս Յոյներու մէկ քա-
ջին հետ կոռած է: Հելլէններու մօտիկ աղդ
մը կար, որ Մակեդոնացի կը կոչուէր: Անոնց




Մեծն Աղեխանոյր ձիու վրայ կը կրուի
թազաւորն էր Աղեխանոյր:

Աղեքսանդր շատ մեծ զործեր ըրած ըլլաւ-
լուն համար կը կոչուի Մեծն։ Ան իր հօրը եր-
կիրն ընդարձակեց, չելլէններն իրեն հնազան-
դեցուց և ուղեց բոլոր աշխարհին տիրել։

Իր բանակը կարգի դրաւ և Տարտանէլէն
անցաւ։ Առջեն ելած բոլոր երկիրները դրաւեց։
Ուղեց Պարսիկներն ու Հայերն աւ իրեն հը-
նազանդեցնել։

Խոշոր բանակով դնաց Պարսիկներուն վրայ
որուն թագաւորը վախցաւ Աղեքսանդրի ոյժէն
և Հայոց Վահէ իշխանէն օգնութիւն ուղեց։
Վահէ անոր օգնելու դնաց։



Խոսի դաւը Կիլիկիոյ կողմերը
Երկու մեծ բանակները հաւաքուեցան Ի-
ստի դաւ ըսուած տեղը։ Մեր քաջերն աւ հոն
զացին։

Պատերազմը սոսկալի եղաւ։ Մեծն Աղեք-
սանդրի զօրքերը յարձակեցան Պարսիկներու-
վրայ և սկսան կոտորել։

Վահէի քաջերը միշտ կը դիմադրէին. Պար-
սիկները չդիմանալով վախան։ Այն ատեն Վա-
հէ իր զինուորները առաւ և դնաց Հայաստան։
Աղեքսանդր ուղեց հնազանդեցնել Վահէն, ուս-
տի քալեց անոր վրայ։

Վահէ իր երկիրը պաշտպանելու համար
գէմ ելաւ և քաջաբար կոտուեցաւ։ Սակայն
կոռուի միջոցին Մեծն Աղեքսանդր նետը քա-
շեց և սպաննեց Վահէն։

Անկէ ետքը մեր երկիրը Աղեքսանդրի իշ-
խանութեան տակ ինկաւ, Պարսկաստանի հետ
մէկտեղ։ Աղեքսանդր Հայերուն վրայ Միհրան
անունով մէկը կառավարիչ դրաւ։

ՀԱՐՑԱՐԱՆ. — Մոճն Աղեքսանդր որո՞նց բազաւորէր. —
Ի՞նչ կ'ուզէր ըլլալ, ի՞նչ բրաւ. — Մեծ կռին ո՞ւր տեղի ունե-
ցաւ. — Պարսիկները ի՞նչ եղան. — Վահէ որո՞ւ օգնութեան զա-
յաւ. — Ի՞նչ բրաւ. — Ի՞նչպէս եւ որմէ՞ սպաննեւցաւ. — Ա-
ղեքսանդր ո՞վ դրայ Հայոց վրայ կրւակալ։



ԺԸ. Պ.Ս

ԿԱՆԱՐՉԱԿ ԵՒ ՄԱՐ ԱԲԱՍ

Դուք լաւ գիտէք որ Հայերուն նշանաւոր
թագաւորներէն մէկն եղած է Վաղարշակի։ Ան
Պարթեւներու թագաւոր Արշակին եղբայրն էր։

Հայերը շատ սիրեցին Վաղարշակը, որով-
հետեւ խաղաղութեամբ և խելացութեամբ կա-
ռավարեց երկիրը արդար օրէնքներ դրաւ։

Ան ուզեց իմանալ թէ իրմէ առաջ որո՞նք
տիրած են Հայաստանի։ Բայց Հայերուն մէջ
մէկը չգտնուեցաւ որ ճշմարիտ բան մը պատ-
մէր հին Հայաստանի մասին։

Այն ժամանակ Վաղարշակ իր մօտ կանչեց
ասորի գիտնական մը, որուն անունն էր Մար-
տիր Կատինայ, որ լաւ գիտէր յունարէն և
ուրիշ լեզուներ Զայն իր եղբօրը մօտ զրկեց
ընծաներով և սա նամակը զրեց անոր։

Երկրի և ծովերու թագաւոր Արշակի բարեւ։
Ես քեզմէ պատուէր ստացայ որ հոգ տա-
նիմ քաջութեան և իմաստութեան գործերու։
Բնաւ մտքէս հանած չեմ այդ խրատը։ Այժմ
կարգի բերած այս թագաւորութիւնը, միտքու

դրի իմանալ թէ որո՞նք տիրած են այս երկ-
րին ինձմէ առաջ, ո՞ր տեղէն են այս նախա-
րարութիւնները, որ կան այս տեղ։

«Ուստի կ'աղաչեմ քու տէրութեանդ, ո՞ր
հրամայես բանալ թագաւորական գիւանդ այս
իմ զրկած մարդուն առջե, որ գտնէ եղբօրդ-



Մար Արաւ Վաղարշակի առջեւ
և որդիիդ փափաքածը ու բերէ ժամ առաջ։
«Ողջ եղիր գուն, որ աստուածներուն մէջ
կը բնակիս»։

Արշակ երբ Մար Արաւէն ստացաւ այս նա-

մակը, ուրախութեամբ հրամայեց բանալ ա-
նոր առջև արքունի դիւանը, ուր պահուած էին
հին թագաւորներու զործերու մասին գրուած
գիրքերը, ու շատ գոհ էր որ իր եղբայրը այդ
պէս խելացի թագաւոր մըն է:

Մար Աբաս երբ կը քննէր գիրքերը, գտաւ
յունարէն գիրք մը, որ Մեծն Աղեքասնդրի հը-
րամանաւ գրուած էր: Այդ գրքին մէջ կային
նախկին նահապետներու, իշխաններու և թա-
գաւորներու պատմութիւնները:

Գիտնական ասորին այս մեծ գիրքէն ըն-
դօրինակեց մի միայն Հայոց պատկանած մասը
և բերաւ Վաղարշակ թագաւորին:

Վաղարշակ այդ գիրքն իր բոլոր գանձե-
րուն առաջինը կը սեպէր և պատուիրեց թեծ
զգուշութեամբ պահել պալատին մէջ: Անկէ
մաս մըն ալ արձանի վրայ փորագրել տուաւ և
կանգնեց քաղաքին մէջ, որ ամէնքը տեսնան և
իմանան թէ ի՞նչ պատահած են Հայաստանի մէջ:

ՀԱՅԱՐԱՆ. — Վաղարշակ ի՞նչ կը փնտուր. — Ուր
դրիեց Մար Աբաս. — Ի՞նչ նամակ գրեց իր եղբօրը. — Մար Աբա-
ս ուր գիրք գտաւ եւ ուր բերաւ. — Վաղարշակ ի՞նչ ընել տուաւ:



ԺԹ. ԴԱՍ

ՎԱՂԱՐՇԱԿ ԵՒ ՄՈՐՓԻՒՂԻԿԵՍ

Վաղարշակ Հայոց պատմութիւնը գտնե-
լէն ետքը սկսաւ Հայաստանը շէնցնել:

Բայց յանկարծ թշնամի մը յարձակեցաւ
Հայաստան: Անոր անունն էր Մորփիւղիկը:

Հայաստանի արևմտեան կողմը գտնուած
Կապագովկիա Երկրին իշխանն էր ան, որ իրեն
հետ միաբանեցուց շատ իշխաններ և ամէնքը
մէկէն արշաւեցին Վաղարշակի վրայ:


Վաղարշակ առաւ իր ղինուորներն ու թըշ-
նամիներուն գէմն ելաւ:

Առաջին անգամ պատերազմի դիմեց Վա-
ղարշակ. ուստի Մորփիւղիկէս ալ ստիպուեցաւ
կուոփ ձեռնարկել: Մորփիւղիկէս սրտոտ, կտրիճ
մարդ մըն էր. բարձր հասակով, խոշոր ու վա-
յելչաղէմ և չափազանց ուժեղ էր: Երկաթէ և
պղինձէ զրահներ հագած էր:

Յարձակեցաւ ան ու մէկ քանի քաջ ու նշա-
նաւոր ղինուորներ սպաննեց Վաղարշակի բա-
նակէն: Կաշխատէր հասնիլ Հայոց թագաւորին,
որ լաւ զինուած մեծ խումբի մը մէջն էր:
Ան մօտեցաւ և յաջողեցաւ նիղակը քաշել

Առովհետեւ կորովի էր ան ու հեռուն կրնար
նետել իր նիզակը, քիչ մնաց որ սպաննէր Հա-
յոց թագաւորը:

Բայց բան մը չկրցաւ ընել, որովհետեւ
մէկ քանի հայ քաջեր, առաջ անցնելով, յար-
ձակեցան անոր վրայ եւ նիզակը միսցին անոր



Հայերը կ'սպաննեն Մորփիւղիկէսը
կուրծքը, գետին փռեցին զայն:

Ապա անոր բոլոր զինուորները փախցո-
ցին: Շատերն սպաննեցին եւ անոնց արիւնը հե-
ղեղի պէս հոսեցուցին:

Անկէ ետքը Հայոց երկիրը խաղաղեցաւ եւ
չքաշեցաւ առաջինքնիքնչիքն թշուալ մա-

Հը: Հայաստանի երջանիկ տարիներն էին:

ՀԱՐՑԱՐԾՆ. — Ո՞վ յարձակեցաւ Վաղարշակի վրայ. —
Մորփիւղիկէս ի՞նչպէս մարդ էր. — Կոռի ատեն ի՞նչ յրաւ. —
Ի՞նչ կերպով սպաննուեցաւ :



Ի. ԳԱՅ

ԱՐԴԱԿ Ա.


Վաղարշակ ունէր որդի մը, որուն անունն
էր Արշակ:

Երբ Վաղարշակ մեռաւ, անոր տեղ թա-
գաւոր եղաւ Արշակ Ա. Ան թագաւոր ըլլա-
լով հետեւեցաւ հօրը օրինակին: Անոր պէս
քարեկարգութիւններ ըրաւ: Աշխատեցաւ ինք-
զինքը սիրցնել մեր ազգին:

Արշակ քաջ ու զօրաւոր մէկն էր: Սքանչե-
լի նշան առնել գիտէր: Երբ որսի երթային,
ինքն ամէնէն շատ որսը կը զարնէր: Երբեմն
կառքով ալ որսորդութեան կ'երթար, երկու ե-
րեք ձիերէ լծուած կառքի մէջէն՝ վայրի ցու-
լեցած տղին գեղանիքներն ու աղանդերն ու ճային

Արշակ պատերազմներ ըրաւ մէկ քանի
թշնամիներու հետ : Սև ծովին եղերքը բնակող
ժողովուրդի մը հետ կռուեցաւ և յաղթեց :

Սև ծովին եղերքը քարէ սիւն մը կանգնել
տուաւ, իր յաղթութեան իբրև նշան :



Արշակ սիւնը կը ծակէ նիզակով
Արշակ երկար նիզակ մ'ունէր, որուն ծայրը
շատ սուր էր : Այդ նիզակը շինուած էր պող-
պատէ : Շինուած ատենը երբ հնոցին մէջ կար-
մրած էր պողպատը, օձի և ուրիշ սողուններու

արիւնին մէջ մխրճած էին : Ատոր համար ոչ
կը ծռէր և ոչ կը կոտրէր :

Այդ նիզակը առաւ Արշակ, երերցուց
ձեռքին մէջ և ուժով նետեց իր կանգնել ու-
ուած քարէ սիւնին :

Նիզակը սիւնը ծակեց և մէջը կեցաւ :

Այս արձանը երկար ժամանակ կը պաշ-
տէին այդ տեղի բնակիչները, աստուածային
զործ մը սեպելով զայն :

ՀԱՐՑԱՐԱՆ . — Վաղարշակի որդիին անունը ի՞նչ էր . — Ար-
շակ ի՞նչալէս մէին էր . — Ի՞նչ կ'ընէր . — Ո՞րոնց հետ պատերազ-
ման . — Սեւ ծովին եզերքը ի՞նչ կանգնեց . — Նիզակը ի՞նչ ըրտ :



Խ ԻԱ. ԴԱ. Ա

ՄՄԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ

Վաղարշակէն ետքը շատ թագաւորներ ե-
ղան Հայաստանի մէջ. ամէնքն ալ Վաղարշա-
կի սերունդէն էին . կը կոչուէին Արշակունիք :

Մեր երկրին մէջ կար նաև նշանաւոր գեր-
դաստան մը, որ կը կոչուէր Բագրատոնի : Այս
Ազգ, Պատմ . Տարր . Բ .

գերդաստանի նախարարները միշտ հաւասար կերպով կը ծառայէին Արշակունի թագաւորներուն:

Բազրատունիները կը մեծցնէին և կը կըրպէին թագաւորական տղաները և յետոյ անոնց մեծը թագաւոր կը պատկանին՝ անոնց հօրը մահէն ետքը:

Նատ համբաւաւոր մարդեր ելան Բազրատունիներու մէջէն. անոնք փառաւորուեցան ոչ միայն հայրենի աշխարհին մէջ, այլ և մեր երկրէն դուրս:

Անոնց մէջ ամէնէն նշանաւորը եղաւ Արմբատ Բագրատունի: Ան քաջէր և անյաղթելի: Իր ատեն մէկը չէր կրնար հաւասարիւ անոր:

Իր հասակը բարձր էր, կորովի էր և զօրաւոր: Մինչեւ խոր ծերութիւն մնաց արագ, աշխայժ. նոյնիսկ ալեւոր տարիքին մէջ պահեց իր երիտասարդական գեղեցկութիւնը:

Սմբատ Բազրատունի մինչեւ իր ծերութիւնը մնաց հեռատես և արթուն. իր առաքիւնութիւններով ամէնուն սիրտը իրեն կը կապէր:

Ան իր բոլոր կեանքին մէջ ջանաց Սամաւուկի որդի մանուկ Արտաւելու գահ բարձրացնել: Սանատրուկ Վաղարշակի սերունդէն էր:

Երբ Սանատրուկ ծնաւ, Սմբատ Բազրատունիի հօրաքոյրը՝ Սամու իր կաթովն սկսաւ մեծցնել մանուկը:

Կը պատմեն թէ ձմեռ օր մը երբ մանուկին մայրը և ծծմայրը կ'անցնէին լեռներու մէջէն, սաստիկ բուք մը ելաւ. մըրիկն ամէն բան տակն ու վրայ ըրաւ, ճամբաները զոցեց և այլեւս մէկը միւսը չէր կրնար զանել:

Սանոտը մանուկը զրկած՝ երեք օր մնաց ձիւնի տակ: Իր կաթով կը կերակրէր եւ իր մարմնի ջերմութեամբ կը տաքցնէր զայն:

Այդ գէպքէն յետոյ մանուկը կոչուեցաւ Սամաւուկ, որ կը նշանակէ Սամու Տուրք: Այս Սանատրուկը յետոյ Հայոց թագաւոր եղաւ:

ՀԱՐՑԱՐՈՂ. — Վաղարշակի սերունդէն եղաղ բազաւուները ի՞նչ կոչուեցան. — Բազրատունիները ի՞նչ եին. — Ո՞վ էր անոնց ամէնէն նօանաւոր իշխանը. — Ինչպիսի մէկն էր Սմբատ. — Ո՞վ էր Սամաւուկ. — Անոնց դայեակն ո՞վ էր. — Ի՞նչ պատմեցաւ. — Ինչո՞ւ Սամաւուկ կոչուեցաւ:



ԻԲ. ԴԱ. Ա

ԵՐՈՒԱՆԴ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Սանատրուկ իր վերջին տարիներուն մեծ վստահութիւն ցոյց տուաւ մարդու մը, որ մօքը կողմէն Արշակունի էր: Անունն էր Երուանդ:

Երուանդ սրտոտ, քաջ և յաղթանդամ երիտասարդ մըն էր և սիրելի եղաւ Սանատրուկին: Ան իր խոնարհութեամբ եւ առատաձեռնութեամբ ամէնքն իր կողմը կը քաշէր: Երբ Սանատրուկ մեռաւ, որսի ժամանակ նետէ մը վիրաւորուելով, Երուանդ օգտուեցաւ շփոթութենէն և թագաւոր եղաւ:

Թագաւոր ըլլալէն յետոյ Երուանդ կառկածեցաւ որ Սանատրուկի որդիները ուզեն իրենց հօրը իշխանութիւնը ձեռք անցնել, ուստի բոլորն ալ սուրէ անցնել տուաւ: Տղայ մը միայն աղատեցաւ այդ կոտորածէն, անոր անունն էր Արտաչէ:


Ծծմայրը զայն փախցուց դէպի արեւելք և լուր զրկեց Սմբատին, որ անմիջապէս Արտաշէսին ետեւէն վաղեց: Երուանդ իմացաւ այդ շէսին ետեւէն վաղեց: Երուանդ իմացաւ այդ բոլորը, մարդ զրկեց որ բոնեն: Սմբատ փառլորը,

Ճառ Պարսկաստան:

Սմբատի քաջութեան համբաւը վաղուց հասած էր Պարսից արքային, որ մեծ պատիւներ տուաւ անոր իսկ Արտաշէսը, որ Արշակունի էր և իր հեռաւոր աղդականը, կըթեց իր որդիւներուն հետ:

Երուանդ սպասեց յարմար ատենին Արտաշէսն սպաննելու համար:

Երուանդ կը վախնար հայ նախարարներէն, կը վախնար նաև ժողովուրդէն: Ուստի մը առածեց շինել իրեն համար քաղաք մը:




Երուանդաւան

Բնտրեց Արմաւիրէն քիչ մը հեռու դէպի արեմուտք բլուր մը, Երասինի ափը: պատեց այդ բլուրը ամուր պարիսպներով և հոն տե-

զափոխեց իր պալատն ու գանձերը:

Քաղաքին ներաբ փորել տուաւ խոր ջրամբարներ. իսկ միջնաբերդը ամրացուց բարձր պարիսպներով: Այս ամուր քաղաքը իր անունով կոչեց Երուանդաւա:

Երուանդաշատէն քիչ մը հեռու, դէպի հիւսիս, փոքր քաղաք մը շինեց Ախուրեան գետի վրայ և հոն փոխադրեց բուլոր բագինները:



Ախուրեան գետը

Այդ պատճառով քաղաքը կոչուեցաւ Բագարան: Այստեղ շինեց մեհեաններ:

Գետի հիւսիսային եղերքը մեծ անտառ մը անկել տուաւ ու պատով շրջապատեց: Մէջը յեցուց գալրի այծեամներով, եղնիկներով,

եղջերուներով, վարագներով, որոնք այդ տեղ կը բազմանային:

Այս անտառը կոչուեցաւ Ծննդոց անսամ: Այստեղ երուանդ իր սիրաը կ'ուրախացնէր որսերով:

Բայց բուլոր շինութիւններուն մէջ ամէնէն գեղեցիկը և չքնազը Երուանդակերտն էր: Այս քաղաքը շինեց ան Երասխի հիւսիսային կողմը, լայն հովիտի մը մէջ:

Այդ քաղաքը մինչև հիմակ կը մնայ իր աւելակներով: Բարձր շէնքեր, աշտարակներ, ծաղկանոցներ, այզիներ շինած էր հոն:

Երուանդ իր այս շինութիւններով չկրցանախարարներուն և ժողովուրդին սէրը վաստը կիլ: Նա միշտ տիսուր էր ու կը վախնար որ Արտաշէսը կու զայ ու զինքը սպաննելով դահին կը տիրանայ:

ՀԱՐՑԱՐՈՒՆ, — Ո՞վ էր Երուանդ . — Սանարուկ հօնչպէս մեռաւ . — Երուանդ իօնչ բռն . — Արտաշէսն ո՞վ փախցուց . մեռաւ . — Երուանդ իօնչ բռն . — Արտաշէսն ո՞վ փախցներ սինեց . — Ո՞ր Սմբատ ո՞ւր զնաց . — Երուանդ իօնչ բաղաբեր սինեց . — Ո՞ր Անտոնը տնկել տուաւ . — Ժողովուրդին սիրուեցա՞ւ:



Ի. Դ. Ա.

ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԱՐՏԱՇԵՍ

Երուանդ միշտ երկիւղի մէջ էր: Անհանգստութենէն քուն չունէր. նոյնիսկ եթէ քնառար սարսափելի երազներ կը տեսնէր:

Ան դեսպաններ զրկեց Պարսից թագաւորին և ըստ:

— Ո՞վ իմ ազգականը, ինչո՞ւ քու տանդ մէջ կը մեծ ցնես Արտաշէսը, որ մեր սերունդէն չէ. ինչո՞ւ ականչ կը դնես աւազակ Սմբատի խօսքերուն: Ինչո՞ւ կը հաւատաս իբր թէ այդ տղան Սանատրուկի որդի է. ան Սանատրուկի որդի չէ. Սմբատը կը խաբէ, հովիւներու տղայ մը զտած է և Արշակունի կը ցուցնէ:

Ան մարդ զրկեց Սմբատին ալ և ըստ:

— Ինչո՞ւ այդ քան կ'աշխատիս: Ծծմայը քեզ խաբած է. ինչո՞ւ իմ դէմ հովիւի տղայ մը կը մեծ ցնես:

Բայց Պարսից թագաւորը չպատասխանեց, իսկ Սմբատ այնպիսի կծու խօսքեր ըրտ, որ երուանդ սաստիկ բարկացաւ և մարդ զրկեց երուանդ առաջնորդ երկու աղջիկները՝ Սմբատի երկիրը և անոր երկու աղջիկները՝ Սմբատանոյշն ու Սմբատահին զերի տարաւ:

Արտաշէս երկար մնաց Պարսկաստանի մէջ: Ան քաջ էր, լաւ ձի հեծնել գիտէր ու կը կռուէր: Պարսիկ իշխանները խնդրեցին իրենց թագաւորէն որ Սմբատի և Արտաշէսի քաջութիւնները վարձատրէ:

Թագաւորը հրամայեց.

— Իմացէք, ի՞նչ կը փափաքի այդ քաջը:

Անոնք պատասխանեցին.

— Ան կը փափաքի որ Արտաշէսը թագաւորէցնես իր հայրենի գահին վրայ:

Թագաւորն ընդունեց և տուաւ իր զօրքին մէկ մասը, որ տանի Արտաշէսը նստեցնէ իր հօրը զահին վրայ:

Երուանդ երբ իմացաւ որ Սմբատ կուգայ պարսիկ զօրքերով, փութով զինուորներ հաւաքեց Հայերէն, վրացիներէն ու գրացի ազգերէն:

Բանակներն իրարու հանդիպեցան: Երուանդի զինուորներու մէկ մասը Հայոց բուն թագաւորը տեսնելով միւս կողմն անցաւ: Երուանդի բանակին մէջ շփոթութիւն ինկաւ:

Պատերազմն սկսաւ Ախուրեան գետին եղերքը:

Կռուին մէջ Արտաշէսի ծծմորը որդիին Գիւակ մեծ քաջութիւններ ցուցուց, բայց թշնամիի սուրէն անոր դէմքին կէսը կտրուեցաւ ու

ինկաւ մեռաւ: Գիսակն եթէ չըլլար՝ Արտաշէս
ու պիտի մեռնէր:

Երուանդ տեսաւ որ իր զօրքերն սկսան փախ-
չել, ինքն ալ ձի հեծած գնաց իր մայրաքաղա-
քը, բայց հալածեցին զայն և սպաննեցին:

Արտաշէս հրամայեց որ փառաւոր թաղում-



Սմբատ բագաւոր կը պսակէ Արտաշէսը
կատարեն:

Սմբատ մտաւ թագաւորի գանձարանը,
գտաւ Սանատորուկի թագը, մեծ հանդէսով թա-
գաւոր պսակեց զայն:

Այդ օրն ամէնէն երջանիկ օրն էր թագը տա-
ռունիի համար:

ՀՅ. ԲՅԱՄ. Պ. Ն. — Երուանդ ի՞նչ լուր դրկեց Պարսից բազու-
տորին. — Սմբատին ի՞նչ լուր դրկեց. — Սմբատ ի՞նչպէս պատա-
խանեց. — Անոնց բաջութեան համար Պարսից բազուորն ի՞նչ բ-
խանեց. — Անոնց բաջութեան համար Պարսից բազուորն ու Արտա-
շէսը տեսն. — Ո՞վ էր Գիսակի, ի՞նչ բռաւ. — Ի՞նչ վերջ ունեցաւ
Երուանդ. — Սմբատ ի՞նչով պասկեց Արտաշէսը:



Ի. Դ. Ա. Ա

ԱՐՏԱՇԷՍ ՇԻՆԱՐԱՐ

Արտաշէս երբ բարձրացաւ իր հօրը գահը,
ջանաց իր երախտագիտութիւնը յայտնել իրեն
բարիք ընողներուն:

Ան մեծամեծ պարզեներ տուաւ պարսիկ
դինուորներուն, որոնք իրեն համար կռուած
էին. մեծ պատիւներով իրենց տեղը զրկեց:

Զմուցաւ իր անձնուեր դայեակ մեծ Բագ-
րատունին. բոլոր նախարարներէն բարձր կար-
գեց զայն, տուաւ անոր ոսկի դգալ և պատա-
ռաքալ: Իր զօրքերուն հրամատար նշանակեց:

Շատ ցաւեցաւ իր ստնտուի որդի Գիսակի-
մահուան համար: Անոր որդին բարձր պատիւի-

արժանացուց. ընդարձակ հողեր տուաւ անոր և
անոնց ընտանիքը կոչեց Դիմախնան նախա-
լարութիւն, այսինքն՝ «Դէմք-կէսեան»:




Արտաշէս Մեծն

Արտաշէս ուրիշ բազմաթիւ գործեր աւ ը-
դաւ: Եինեց նաև զիւղեր, քաղաքներ ու մե-
ծամեծ շէնքեր:

Բոլոր Հայերը զայն սիրեցին ու յարգե-
ցին: Անոր անունը տարածուեցաւ: Ամէն մարդ-
կիտէր թէ ան քաջ է ու զօրաւոր:

Անոր օրով համբաւաւոր թագաւոր մը կար

Անիփալ անունով: Ան քաջ, յանդուզն իշխան-
մըն էր: Մեծ ճակատամարտներ մղած էր, ամէ-
նուն յաղթած էր: Աշխարհի մէկ կարեւոր մա-
սը գրաւած էր, բայց օր մըն աւ յաղթուեցաւ,



Անիփալ

և զիտնալով որ Հայոց արքան քաջ ու բարի է,
անոր եկաւ և անոր հիւր եղաւ: Ան սիրով ըն-
դունեց: Թագաւորն ու Անիփալ որսի կ'եր-
թային և խնջոյքներ կը սարքէին:

Օր մը որսի գացած ժամանակ Երավիս գետին մօտերը անտառ մը տեսան, զետին ճիշտ եղերքը: Եթէ այդ տեղ քաղաք մը շինուէր և բերդեր կանգնուէր, մարդ չէր կրնար այն քաղաքը դրաւել:

Աննիբալ ըստ Արտաշէսի.

— Ահա գեղեցիկ տեղ մը. Եթէ հոս քաղաք մը շինես, շատ ամուր պիտի ըլլայ, ոչ մէկ թագաւոր պիտի կրնայ դիւրութեամբ զրաւել զայն

Արտաշէս ինքն ալ հաւնեցաւ այդ տեղին և գեղեցիկ քաղաք մը շինեց:

Իրեն անունով այդ քաղաքը կոչուեցաւ Արտաւաս: Քաղաքին մէջ մեհեան մը շինեց Եւ բոլոր կուռքերը հոն փոխագրեց: Այնաեղ փոխագրեց նաև Երուանդաշատի և Արմաւիրի գեղեցիկ զարդարանքները:

Արտաշատը եղաւ Հայաստանի ամէնէն գեղեցիկ և ամէնէն հարուստ քաղաքը:

ՀԱՅՑԱԲԱՆ.—Արտաշէս քազաւոր ըլլալէն ետք ի՞նչ քաւ.—Պարսից օրբերուն ի՞նչ տուաւ.—Մերաքը ի՞նչպէս պատուեց.—Գիսակի որդիին ի՞նչ պատի տուաւ.—Ի՞նչ ընութիւններ քաւ.—Ո՞վ է Աննիբալ.—Ո՞վ չինց Արտաւար եւ ո՞ւր:



ԻԵ. ԴԱ. Ա

ԽՈՍՐՈՎ ԵՒ ԱՆԱԿ

Արտաշէսին յետոյ Հայերն ուրիշ համբաւաւոր թագաւոր մալ ունեցան: Անոր անունն էր Խոսրով: Ան յոյժ քաջ և խելացի էր:

Պարսիկներուն հետ բարեկամ էր Խոսրով, ինչուոր անոնց թագաւորը Խոսրովի ազգական էր:

Օր մը պարսիկ իշխան մը, Արտաշէր անուն, թագմաթիւ զինուորներ իր կողմը գրաւելով ուղեց ինքն ըլլալ թագաւոր:

Յարձակեցաւ թագաւորի զինուորներուն վրայ, մէկ երկու անգամ յաղթեց: Ամէնէն յետոյ թագաւորն ալ սպաննեց:

Խոսրով երբ իմացաւ իր ազգականին մահը, ցաւեցաւ և բարկացաւ: Ժողվեց իր զինուորները և գնաց Արտաշիրի դէմ:

Ան իր բանակն առաւ և Խոսրովի դէմ եւաւ: Բայց Հայերն այնպէս նետուեցան անոր զինուորներուն վրայ, որ ամէնն ալ փախան:

Իրենց պետն ալ սկսաւ փախչիւ: Բայց նորէն պատրաստուեցաւ և Խոսրովի դէմ եւաւ:

Խոսրով այնպիսի ջարդ մը տուաւ, որ այս
անգամ Արտաշիր հազիւ կրցաւ ինքղինքն ազա-
տել փախչելով:

Տեսնելով որ Հայերուն դէմ պիտի չկըր-
նայ ելնել և պիտի յաղթուի անոնցմէ, խոր-
հեցաւ խարդախութեան դիմել:

Իր մեծամեծ նախարարները կանչեց և ը-
ստ.

— Զեզմէ ո՞վ կրնայ ինձի օգնել: Զեզմէ
ո՞վ որ կարենայ բարեկամութիւն կեղծելով
Հայոց թագաւորը սպաննել, մեծամեծ պար-
գևներ պիտի տամ, թագաւորական պատիւ և
զգեստներ պիտի տամ անոր. ինձմէ ետքը եր-
կրորդ պիտի ըլլայ:

Արտաշիրի խորհրդականներուն մէջ կար
Անակ անուն մէկը, որ Խոսրովի ազգական էր:
Ան ըստ.

— Տէր արքայ, ես կը խոստանամ երթաւ
Խոսրովն սպաննել: Իբրև թէ քեզմէ վախնա-
ւու պիտի փախչիմ և Հայաստան մտնեմ:

Թագաւորն ընդունեց: Այն ատեն Անակ իր
տունն ու տեղը ժողվեց, իր ծառաներն առաւ,
դէպի Հայաստան եկաւ:

Իր առջեխն մարդ զրկեց Խոսրովի և ըստ.

— Ո՞վ իմ ազգականը, ես չուզելով Արտա-
շիրի հնազանդիւ, վախայ անոր քովէն և եկայ
քեզի:

Խոսրով երբոր լսեց Անակի Հայաստան
գալը, անմիջապէս օգնական զինուորներ զրկեց
անոր առջեւ, որ իրեն մօտ բերեն

Անակ եկաւ: Խոսրով անոր մեծ պատիւներ
ըրաւ. իբրև ազգական իրեն հետ սեղան նստե-
ցուց, ինչոյքներ սարքեց: Միասին որսի կ'երւ-
ցուց, ինչոյքներ թագաւորի անտառներուն մէջ,
ուր շատ երեններ կ'այլին:

Անգամ մը Խոսրով և Անակ ձի հեծած
լեռը որսի զացին: Իրենց հետ առած էին բազ-
մաթիւ շուներ: Անոնց հետ կ'երթայլին նաև
ուրիշ իշխաններ և զինուորներ:

Երբ անտառը մտան, սիրուն եղնիկ մը տե-
սան դիմացի բլուրին վրայ: Զիերը քշեցին
դէպի այն կողմը:

Անակ տեսաւ որ անտառին մէջ իրենք եր-
կուքը մինակ են, քաշեց իր ազեղը և նետով
մը ձիէն վար զլորեց թագաւորը. ինքն աւ իր
ձին քշեց և սկսաւ փախչիւ:


Վերջը մնացած իշխանները և զինուոր-
ները հասան եկան թագաւորի գտնուած տեղը,
տեսան որ թագաւորը զետին փռուեր է:

Մօտեցան . թագաւորը մեռնելու վրայ էր :
Ան իր իշխաններուն ցած ձայնով ըստաւ .

— Անակ վիրաւորեց զիս . բռնեցէք զայն և
մեռցուցէք ու իր ընտանիքը սրէ անցուցէք :

Խոսրով քիչ յետոյ հոգին տուաւ :

Իշխանները քշեցին իրենց ձիերը , Արտա-
շատ քաղաքին կամուրջին մօտ հասան Անակի
ետեւէն և անմիջապէս սպաննելով Երասխ դե-



Կեսարիա բաղադր
տը նետեցին : Անոր ընտանիքն ալ սուրէ ան-
ցուցին , բոլորը մեռցուցին :

Այդ կոտորածէն ազատեցաւ միայն Անա-
կի մէկ փոքրիկ տղան , որուն անունն էր Գրի-
գոր : Գրիգորը ստնտու մը ունէր : Այդ ստըն-

տուն , որովհետեւ շատ կը սիրէր մանուկը ,
փախցուց զայն և տարաւ կեսարիա :

ՀԱՐՅԱՐԱՆ , — Ո՞վ էր խորով . — Ո՞վ էր Արտավազ եւ
ի՞նչ քու . — Անակ ի՞նչ խոսացաւ . — խորով ի՞նչպէս քննու-
եց Անակը . — Ի՞նչպէս սպանեւեցաւ խորով , բայց մեռնելէ ա-
ռոջ ի՞նչ հրամայց . — Անակի լնտանիթին ն՞վ ազատուեցաւ :



ԻՉ . Դ Ա. Ա

ՄԵԾՆ ՏՐԴԱՏԻ ՔԱԶՈՒԹԻՒՆԵՐԸ

Արտաշեր երբ լսեց Խոսրովի սպաննուիլը
շատ ուրախացաւ :
Անմիջապէս զօրք ժողվեց և Հայաստանի
վրայ եկաւ : Հայ նախարարներն իրենք ալ
պատրաստուեցան և դիմադրեցին Արտաշերի
զինուորներուն :

Բայց յաղթուեցան , որովհետեւ Խոսրովի
նման թագաւոր մը չունէին իրենց զլուխը :
Արտաշեր աիրեց Հայաստանի և Հրամայեց որէ
անցնել Հայոց թագաւորին ընտանիքը :

Այս դժբախտութենէն ազատեցան երկու
հոգի , ատոնցմէ մեկն էր Խոսրովի որդին Տրդատ :

Տիրասէր նախարար մը առաւ զայն ու հոռմէական երկիր փախցուց:

Իսկ աղատուածներէն միւսն էր Տրդատիքոյը՝ Խոսրովիլիդուս: Օտա Ամատունի նախարարը փախցուց զայն և թագաւորին զանձերուն



Խոսրովիլիդուս

Հետ տարաւ պահեց ամուր բերդի մը մէջ:

Արտաշիր տիրեց Հայաստանին և սկսաւ սոսկալի նեղել Հայերը. անոնցմէ ծանր տուրքեր առաւ:

Հայերը կը փափաքէին որ իրենց սիրելի թագաւորի որդին շուտ մեծնայ և զայ զիրենք աղատէ Արտաշիրի ձեռքէն:

Տրդատ Հոռմի մէջ մէծցաւ ու կրթուեցաւ: Անոր քաջութիւնը մեծ էր, անոր նմանը չկար: Շատ գեղեցիկ էր և բարձրահասակ: Բազմաթիւ քաջութիւններ գործեց և բոլորը զարմացուց:

Անգամ մը Հոռմի կայսրին դէմ պատերազմի ելած էր բարբարոս ազգի մը թագաւորը: Գորաց պետն էր ան: Տրդատ ալ կայսրին զինուորներուն մէջն էր:

Գոթաց թագաւորը լուր զրկեց կայսրին և բարձրաց թագաւորը լուր զրկեց կայսրին և

լուր: — Եթէ կ'ուզես առանց արիւն թափելու գործը լմնցնել, ելիր իրարու հետ մենամարտինք: Մեզմէ ով որ յաղթէ, ան թող ըլլայ մեր երկիրներուն թագաւոր:

Կայսրը շատ վախցաւ Գոթաց թագաւորէն, որով հետեւ աւելի զօրաւոր էր:

Բայց իշխանները պատմեցին թէ իրենց բանակին մէջ գտնուած հայը՝ Տրդատ մէծ քաթիւններ ըրած է և իր տեղը կրնայ կռուիլ: Կայսրը ուրախացաւ և իր թագաւորական զգեստները անոր հազցուց:

Տրդատ լաւ զինուած դէմ ելաւ Գոթացին, որ հայ հոյելէն յարձակեցաւ, սուրը քաշեց:

Բայց Տրդատ այնպէս ուժեղ նետուեցաւ անոր վրայ, այնպէս արագ բռնեց անոր ձեռքեն:

րէն, որ Գոթաց թագաւորը սասանեցաւ մնացւ
Տրդատ բռնեց զայն ու կայսրին տարաւ:

Կայսրը հիացաւ Տրդատի քաջութեանը և
իմաստալով որ Հայոց թագաւորի որդին է, թագ
դրաւ անոր գլուխը և զինուրներ տուաւ որ եր-
թայ Հայաստանին տիրանայ:



Օսա կը յանձնէ Խոսրովի իդուխան ու գանձերը
Երբ Տրդատի Հայաստան զալու լուրը մեր
նախարարներն իմացան, ամէնքն ալ զացին դի-
մաւորելու իրենց թագաւորը:
Օտա Ամատունի տարաւ Տրդատի քոյրը և
պահած զանձերը, բոլորը յանձնեց Տրդատի:

Տրդատ շատ ուրախացաւ և մեծ պատիւներ
տուաւ Օտա Ամատունիի և ուրիշ հայ նախա-
րարներու:

ՀԱՐՑԱՐԱՆ . — Խոսրովի մահէն եօք ի՞նչ բռաւ Արտաշէր .
— Տրդատ որո՞ւ ձեռնով պատուեցաւ . — Տրդատ ի՞նչպիսի մեկն
եր եւ Գորաց քազաւորը ի՞նչ բռաւ . — Կայսր ինչո՞վ պատուեց
եր . — Օսա եւ միւս նախարարներն ի՞նչ բրին:

ԻԷ. Դ Ս. Ա

ՏՐԴԱՏ ԵՒ ԳԵԴՐԵԼՈՆ

Տրդատ իր քաջութիւնով շուտ տէր եղաւ
Հայաստանի: Տրդատ ուզեց իր հօրը մահուան
վրէժը լուծել Պարսիկներէն, ուստի մեծ զօ-
րութիւնով յարձակեցաւ անոնց վրայ, արտաք-
սեց զանձնք Հայաստանէն:

Ո. Գրիգոր Լուսաւորիչի միջոցաւ քրիս-
տոնեայ եղաւ և սկսաւ մեհեանները կործանել
ու եկեղեցիներ շինել:

Անզամ մը երբ Տրդատ ճամբորդելու կը
պատրաստուէր, Պարսիկներն ու բարբարոս չար
թշնամիներ յարձակեցան Հայաստանի վրայ: թշնամիներ յարձակեցան Հայաստանի վրայ:

Այդ բարբարոսներուն պետն էր Գեղուեհոնի:
Տրդատ կարգի դրաւ իր զինուորները և քա-
ջոթեամբ թշնամիներուն դէմն ելաւ: Նա
իր զինուորները 4 մասի բաժնեց երեք մասը
անտառներու մէջ տեղաւորեց, իսկ միւս մասը
թշնամիին առջե հանեց:

Տրդատի քաջերն սկսան Գեղուեհոնի զօրքը
ջարդել: Անոնք սկսան փախչիլ դէպի անտառ-
ները: Այն ատեն պահուած հայ զինուորները
յարձակեցան, մեծ մասը կոտորեցին, մէկ մա-
սը դերի բռնեցին, մաս մըն ալ փախցոցին:

Գեղուեհոն նոր զօրք ժողվեց լուր զրկեց
Տրդատի և հպարտութեամբ ըստ,

— Եթէ չես ուզեր որ երկիրդ աւերեմ, ձեռ-
քդ ինկած զերիները շուտ ետ դարձուր և դրամ
աւելցուր ու միասին զրկէ:

Տրդատ փոխանակ պատասխանելու, առաւ
զինուորները և զնաց լաւ դաս մը տալու:

Կոռի ատեն երբ Տրդատ թշնամի զօրա-
պետ մը կը հալածէր, Գեղուեհոն զազտնի հասաւ
անոր ետեէն, իր ձիին երկար չուանը նետեց և
Տրդատի ձախ ուսին ու բազուկին անցուց:

Կայձակի արագութեամբ դարձաւ Տրդատ,
բռնեց չուանը և կեցուց իր թշնամին:

Գեղուեհոն փախնալով փորձեց փախչիլ,

Տրդատ սուրը բարձրացնելով ա' յնպէս մ' ի-
շեցուց որ Գեղուեհոն երկու կտոր եղաւ:



Տրդատ Գեղուեհոնը երկուքի կը կտէ
Անկէ յետոյ հայ կարիճները Հայաստա-
նը աղատեցին թշնամիներէն:

ՀԱՅՈՐԾՈՒՆ. — Տրդատ ի՞նչպէս լուծեց նօրք վրէծք . —
Պարօիկնեն ու Շեղուեհոն ի՞նչ բրին. — Տրդատ ի՞նչպէս բաժնեց
իր զինուրերը . — Շեղուեհոն ի՞նչ վախճան ունեցաւ:



Ի. Դ. Ա

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՒ

ՄԵԾՆ ՆԵՐԱԷՄ Թագաւոր մը չէր, բայց շատ
մը թագաւորներու բարեկամը և օգնականն էր:
Անոր պատմութիւնը ազուոր բաներ կը պարու-
նակէ:

ՆԵՐԱԷՄ Ա. Գրիգոր Լուսաւորիչին թոռան
թոռն էր: Նա փոքրիկ մանուկ եղած տառենը
խելօք և հնազանդ էր իր ծնողքին: Պատիկու-
թեանը կը զտնուէր կեսարիա քաղաքը: Հոն
դպրոց գնաց և ուսաւ օգտակար բաներ: Յետոյ
ամուսնացաւ Սամղուխս անուն օրիորդի մը հետ:

ՆԵՐԱԷՄ ունէր բարձր հասակ, գեղեցիկ
գէմք: Ամէն մարդ զայն կը յարգէր, որով-
հետեւ լուրջ էր, պարսապ չէր խնդար, տղեղ
կատակներ չէր ըներ:

Հայոց կաթողիկոսը մեռած էր, ուստի բու-
լոր մեծ իշխանները, եպիսկոպոսները, վար-
դապետները հաւաքուեցան նոր կաթողիկոս ըն-
տրելու համար: Ամէնքն ալ յարմար զան
ՆԵՐԱԷՄ, որ Հայոց թագաւորին զինակիրն էր:

ՆԵՐԱԷՄ չընդունեց կաթողիկոսութիւնը և
բռաւ:

—Ես արժանի չեմ այդ սուրբ պաշտօնին,

ուրիշ աւելի արժանաւոր մը ընտրեցէք:
Բայց բոլոր հաւաքուած Հայերը պնդեցին
որ ընդունի, որովհետեւ ամէնէն արժանաւորն
էր: Եւ մեծ դժուարութեամբ ընդունել առին:
Ապա կաթողիկոս ձեռնադրելու համար
զրկեցին կեսարիա: Անոր հետ կ'երթային քը-



ՄԵԾՆ ՆԵՐԱԷՄ

աանեհինգ եպիսկոպոսներ , նոյնչափ մեծ իշխաններ և չորս հազար զինուորներ :

Ներսէս նստած էր սպիտակ ջորիներ լըծուած գեղեցիկ կառքի մը մէջ :

Երբոր կեսարիա հասան , հոն մեծ պատիւներ տուաւ Եւսեբիոս եպիսկոպոսը , որ փառաւոր հանդէսով Ներսէսը կաթողիկոս ձեռնադրեց և օծեց :

Չեռնազրած ատենը , երբոր Ներսէս եկեղեցիի սեղանին առջեւ կեցած էր , պատուհանէն սպիտակ ազաւնի մը ներս մտաւ ու դնաց անոր գլուխին կեցաւ :

Ժողովուրդն այս նշանը Աստուծմէ զրկը ուած համարեց , ուրախացաւ և սկսաւ յարգել Ս . Ներսէսը :

Ներսէս դարձաւ Հայաստան , ուր փառաւոր ընդունելութիւն ըրին իրեն :

Ներսէս անկէ ետքն սկսաւ մեր երկիրը չէնցնել ու բարեկարգել : Շինեց դպրոցներ , որոնց մէջ հայ մանուկները կ'ուսանէին յունարէն և ասորերէն լեզուներ : Հայերէն գիրչկար տակաւին : Շինեց նաև վանքեր , հիւանդանոցներ , աղքատանոցներ ծերանոցներ , բորսոներու տուներ , հիւրանոցներ ևայլն :

Այս բոլոր մեծ դործերուն համար Ներսէս

շատ սիրելի եղաւ , յարգուեցաւ և կոչուեցաւ Մեծն Ներսէս :

ՀԱՅՈՒԹՈՒՆ . — Ո՞վ էր Մեծն Ներսէս . — Մանկութեան ատեն ո՞ւր մեծցաւ ու կրուեցաւ , ի՞նչպիսի տայ էր . — Ներսէսի ի՞նչ բնտեցին եւ ինչո՞ւ չընդունեց . — Ո՞վ սիաթե որ ընդունի Կորողիկոս ձեռնադրուելու համար ո՞ւր զիաց . — Զեռնադրութեան ատեն ի՞նչ պատահեցաւ . — Ինչե՞ր ընեց Ներսէս եւ ի՞նչ կոչուեցաւ :



ԻԹ . Դ Ա. Ս

ՄԲԾՆ ՆԵՐՍԷՍ Ա.ՔՍՈՐԻ ՄԷՋ

Հայերը թագաւոր մ'ունէին , անոր անունը Արշակ էր :

Արշակ մեծ կարեւորութիւն կուտար Ներսէսի խօսքերուն ու խրատներուն : Մեծն Ներսէսը ալ անոր կ'օգնէր իր խորհուրդներով :

Յոյներուն թագաւորը անգամ մը թշնամի եղաւ Արշակին և պատրաստուեցաւ արշաւելու մեր երկիրը :

Արշակ շատ վախցաւ : Խնդրեց Ներսէսին որ խորհուրդ մը տայ իրեն և ազատէ զինքը Յոյներու թագաւորին ձեռքէն :

Մեծն Ներսէս ուղեց երթաւ Պոլիս և միջնորդութիւն ընել Յոյներու թագաւորին և Արշակին միջեւ։ Առաւ հետը բազմաթիւ արժէքաւոր ընծաներ ու մէկ քանի իշխաններ եւ ճամբայ ելաւ։

Յոյներու թագաւորին անունն էր Վաղէս, պատուեց Մեծն Ներսէսը, բայց յետոյ թւշնամացաւ։

Վաղէս մէկ հատիկ մանչ մառնէր, որ ծանրապէս հիւանդացաւ։

Բոլոր բժիշկները ամէն ձիգ թափեցին, բայց չկրցան բժշկել։ Այն առեն վաղէս խընդիրեց Ս. Ներսէսէն, որ աղօթէ հիւանդին վրայ եւ բժշկէ։ Մեծն Ներսէս ըստ։

— Եթէ ձշմարտապէս հաւատաս Քրիստոսի, կ'ազօթեմ եւ թերեւս Աստուած կը բուժէ մասնուկը, եթէ ոչ՝ ան պիտի մեռնի տասնեւհինդ օրէն։

Վաղէս Ս. Ներսէսի խօսքին արժէք չու տաւ։ Տղան տասնեւհինդ օրէն մեռաւ։ Այն ժամանակ Վաղէս բարկացաւ եւ ըստ։

— Տարէք անապատ, ամայի կզզի մը աքսորեցէք Ներսէսը եւ իր հետ գոնուող բոլոր եւ կեղեցականները։ Կատարուեցաւ հրամանը։ Այն կզզին անբեր

եւ անապատ ժայռ մըն էր, ուր մարդ եւ զազան չէին բնակեր, ջուր չկար, բնակելու տեղ չկար։

Այս սոսկալի անապատը աքսորուեցան Ս. Ներսէս եւ իր հետեւորդները։ Երկու երեք օրանուաղ մնացին։ Սոսկալի նեղուեցան։ Ս. Ներսէս ծունկի եկաւ եւ աղօթէց։ Յանկարծ փոթորիկ մը ելաւ, ծովն ալեկոնց եցաւ։ ջուրը սկսաւ կզզին նետուիլ, ձուկերն ալ միասին։ Զուրը քաշուեցաւ ձուկերը մնացին։ Զուրին հետ մէկ քաշուեցաւ կտորներ ալ նետուեցան։ այն ատեղ փայտի կտորներ ալ նետուեցան։ այն ատեն կրակ վառեցին, ձուկերն եփեցին ու կըշտեն կրակ վառեցին, ձուկերն եփեցին ու կըշտեն։ Ս. Ներսէսի աղօթած տեղը փորեցին և տացան։ Ս. Ներսէսի աղօթած տեղը փորեցին և անկէ անուշ ջուր բխեցաւ։ Այդ ջուրէն ալ խըմեցին։

Վաղէս զիշեր մը սոսկալի երազ մը տեսաւ։ Ս. Ներսէս երեւցաւ իրեն, ձեռքը սուր մը բռնած։ Վաղէս սարսափած անկողինէն գուրս փախաւ։

Վաղէսին տեղ ուրիշ բարի մարդ մը եղաւ թագաւոր։ Ան ուղեց Ս. Ներսէսն ազատել, բայց չէր զիտեր որ ո՞զչէ թէ մեռած։ Անզամ մը առազատանաւեր տեսան որ կզզին մէջ ՛րակայ, մօտեցան և իմացան որ Ս. Ներսէս եւ իր հետինները ո՞զչեն։ Լուր առըին Պոլիս։ Այն

տաեն նաև զրկեցին եւ ամէնքն ալ ազատեցին։ Թագաւորը պատուեց Ս. Ներսէսը, մեծ ընծաներ տուաւ և զրկեց Հայաստան, խոստացաւ բարեկամ ըլլալ Արշակի։

ՀԱՐՅԱԲՐԱՆ. — Ո՞վ էր Արակ. — Յոյներուն բազաւոնի ի՞նչ քրաւ. — Արակի ի՞նչ քրաւ. — Վաղէս ինչո՞ւ ախուեց Ս. Ներսէսը. — Կողին ի՞նչպէս տեղ էր. — Ի՞նչպէս կերակրուեցան. — Վաղէս ի՞նչպէս մեռաւ. — Ս. Ներսէս ի՞նչպէս ազատուեցաւ։



Լ. Դ Ա. Ա

ԶԻՐԱՒԻ ԿՌԻՒԸ

Ս. Ներսէս երբ տակաւին Պոլիս կը դանըռէտէր եւ նոր ազատուած էր, լուր առաւ որ Արշակ գահազուրկ եղեր է։ Յոյներուն կայորը Արշակին տեղ թագաւոր պակեց Արշակի որդի Պապը, որ նոյնպէս հոն կը դանուէր։

Մեծն Ներսէսի եւ Պապի հետ մեր երկիրը եկան նաեւ յոյն զինուորներ։ Պարսիկները կ'ուղէին մեր երկիրը զրաւել։ Արշակի մահէն յետոյ յարձակեցան Հայաստան ու ամէն տե-

սակ չարիքներ ըրին։

Մերուժան անունով հայ նախարար մը կար։ Ան պարսիկներուն հետ բարեկամ եղաւ և կ'ուղէր Հայոց թագաւոր ըլլալ։ Մերուժան չար մէկն էր, իր ազգին դէմ ամէն չարիք կը լնէր որպէս զի սիրելի ըլլայ Պարսից թագաւորին և Հայոց թագաւորութիւնն ինք առնէ։

Ան Պարսիկներուն գլուխն անցած մտաւ Հայաստան և սկսաւ գիւղերն ու քաղաքներն այրել ու ժողովուրդը կոտորել։ Երբ լսեց որ Ս. Ներսէս Հայաստան կուզայ, անոնց առջև ելաւ։


Երկու կողմի զինուորները նպատլեռան մօտ դաշտի մը մէջ նստեցան։ Յոյն զինուորներն ու հայ քաջերը կարգով շարուեցան և սկսան յարձակիլ թշնամիին վրայ։

Պապ թագաւորն ու Ս. Ներսէս մէկ քանի զինուորներով լեռը ելան և բարձրէն կը գիտէին։ Երբ պատերազմն սկսաւ, Մեծն Ներսէս բազկատարած սկսաւ ազօթել։ Քանի ձեռքերը տարածած կ'ազօթէր, հայ զինուորները կը յաղթէին և թշնամիին ջարդելով կը փախցէին։ Բայց երբ Ս. Ներսէս ազօթելէն յոդնէր և ձեռքերը իջեցնէր, Հայերը կը յաղթուէին։

Այս բանը տեսնելով երկու զինուորներ Ազգ. Պատմ. Տարր. Բ.։

Ս. Ներսէսի ձեռքերը վեր բռնեցին, որ չյոդական:

Հայերը սոսկալի ջարդ մը տուին հակառակորդներուն և մէկ մասն ալ փախցուցին:
Մերուժան տեսնելով որ պիտի բռնուի,
ձի հեծած սկսաւ արագ արագ փախչիւ: Բայց



Մերուժան շամփուրով կը պատկռի
Սմբատ Բագրատունի հայ իշխանը հասաւ անոր
Ետեւէն եւ բռնեց զայն:
Բռնուած տեղը հովիւներ կը ակ վառած էին
և միս խորովելու համար շամփուրները կը ակը

դրած էին: Սմբատ առաւ այդ շամփուրներէն
մէկը, կրակին մէջ բուրովին կարմրցուց ու
կլոր օղակ մը շինելով դրաւ Մերուժանին գը-
լուխը և ըսաւ:

— Կը պսակեմ քեզ, ո՞վ Մերուժան, որով-
հետև Հայոց թագաւոր ըլլաւ կը փափաքէիր:
Այսպէս մեռաւ Մերուժան, որ մատնիչ
մըն էր:

ՀԱՐՑՈՒԱՆ. — Արշակին տեղ ո՞վ եղաւ Հայոց բազաւոր.
— Պարսիկներն ի՞նչ կ'ուզէին, — Ո՞վ եւ Մերուժան. — Երկու
կողմերն ո՞ւր հմտիպեցան իրարու. — Սեծն ներաէս երբ կ'աղօ
քէր ի՞նչ պատմեցաւ. — Մերուժան ի՞նչպէս սպաննուեցաւ:



Լ.Ա. Դ.Ա. Ս

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Նպատ լեռան մօտ մղուած պատերազմին
մէջ նշանաւոր եղաւ Մուշեղ Մամիկոնեան՝ մեծ
սպարապետը:

Մուշեղ Ս. Ներսէսին հետ մէկ տեղ եկաւ
իր և մեր հայրենիքը, պաշտպանելու համար
զայն:

Մուշեղ այնքան քաջ էր եւ քաջութեան գործեր ըրած էր, որ ամենքը դայն կը գովէին ու կը յարգէին։ Երբ հայ զինուորները յար-



Մուշեղ Մամիկոնեան

ձակէին կ'ըսէին.

— Տէրոյն եւ Մուշեղի սուրը լսել կ'ուզէին որ իրենց ձեռքի սուրը Աստուծոյ եւ Մուշեղի սուրին պէս անյաղթելի են։

Պարսիկներուն թագաւորը կ'ուզէր անպատճառ գրաւել Հայաստանը, ատոր համար անձամբ զօրք ժողվեց եւ մեր երկրին վրայ քալեց։ Մուշեղ երբ իմացաւ որ պարսիկ թագաւորը կ'ուզայ, կանոնաւորեց իր բանակը եւ անոր գէմ ելաւ։

Սպարապետը ճերմակ ձի մը նստած առաջ կը քալէր եւ կը խրախուսէր իր բանակը։ Անոնք նետուեցան թշնամիին վրայ եւ սկսան կոտորել։ Երբ տեսան հայ անպարտելի սպարապետը սկսան ընկրկիլ, կռնակ դարձնել եւ փախուստ տալ։

Իրենց թագաւորն ալ ձի մը հեծած փախչելով՝ հազիւ կրցաւ պրծիլ։

Հայերը առին պարսիկ թագաւորին վրանը եւ գանձերը, դերի բռնեցին անոր տիկիններու տիկինը եւ միւս կիները։ Բայց հայ հրամատարը պատուեց ու յարգեց եւ երբեք չարիք չըրաւ անոնց։ Վեց հարիւր պարսիկ մեծամեծներ ու զօրավարներ բռնեց, անոնց կաշին տիկ հանել ու խոտ լեցնել տուաւ։

Նախորդ դասին մէջ տեսնուեցաւ որ մեր հայրերն ի՞նչպէս խորտակեցին պարսիկ բանակը նպատ լեռան մօտերը։ Աս կոռին բէջ եթէ

ՀԵԼԼԱՐ Հայ մեծ հրամատարը , Հայերը դըժաւուար կը յաղթէին : Անոնց բանակը հսկայ էր և անթիւ , անհամար : Ամէն ազգէ կային :

ԵՐԲ Ս . Ներսէս Նպատ լեռան վրայ կ'աղօթէր , Բագրատունի սպարապետը մէկ կողմ շարեց հայ զինուորները , Յոյները միւս կողմ : Երբ պատերազմը սկսաւ , Մուշեղ կայծակի պէս ամէն կողմ կը վազէր , ամէնուն կը հասնէր , կը քաջալերէր : Հայերը առիւծի պէս կը յարձակէին և կը գոռային , իսկ պարսիկ զօրքերը կը փախչէին սարսափած : Պարսից թագաւորը լեզապատառ , հետիոտն փոսէ փոս ցատկելով , ծակէ ծակ սողալով օձի պէս , այս անգամ ալ աղատեցաւ :

Պատերազմին մէջ Մուշեղ հանդիպեցաւ Հոնաց Ուռնայր թագաւորին : Ուռնայր հասակով յաղթանդամ մարդ մըն էր : Մուշեղ հասաւ անոր ետեւէն , երբ կը փախչէր : Իր երկար նիղակը զարկաւ անոր գլխարկին և ձիէն վար ձգեց դայն : Քաշեց հանեց իր սուրը և անոր ճաղատ զլուխին վրայ ծեծելով ըստ :

— Եթէ դու Ուռնայր ես , ես ալ Մուշեղ եմ , բայց դու շնորհակալ եղիր որ թագ ունիս , վասն զի ես թագաւոր մարդ չեմ սպաններ : Այս ըստ ձգեց որ 8 ձիւսոր զինուոր-

ներով փախչի իրեն երկիրը : Պատերազմէն ետքը մէկ քանի հայ նախարարներ նախանձեւով Մուշեղի , Պապ թագաւորին զացին և ըսին .

— Տէր արքայ , Մուշեղը Պարսիկներուն բարեկամ է և քեզի թշնամի : Երբոր Պարսից թագաւորին կիները գերի բռնած էր , ետ դարձուց . Ուռնայր թագաւորն ալ չսպաննեց և թուց որ փախչի : Քեզ պիտի սպաննէ :

Պապ թագաւորը իր մօտ կանչեց Մուշեղը և ըստ :

— Դուն կ'երևի թէ Ուռնայրին բարեկամ ես . ինչո՞ւ արձակեցիր դայն և չսպաննեցիր :

— Տէր արքայ , պատասխաննեց համարձակ , աղեկ է որ չարախոսութիւններուն ականչ չկախես : Ես ուռնայրը կրնայի սպաննել , բայց չըսպաննեցի , որովհետեւ անիկա թագ ունի և օծուած է : Ով որ թագ ունի ես չեմ կարող ձեռք բարձրացնել անոր վրայ :

Պապ համոզուեցաւ որ Մուշեղ յանցանք չունի : Գրկեց զայն եւ իր քովը նստեցուց :

Ան ուրիշ շատ քաջութիւններ ալ ըրաւ և մեծ անուն հանեց : Բայց իր նախանձորդները օր մը խարդախութիւնով սպաննել ուրուին զայն : Երբ անոր մարմինը իրեն ընտա-

Նիքին մօտ տարին, անոր տունինները չէին հաւատար մեռած ըլլալուն, թէև կը տեսնէին որ գլուխը մարմինէն կտրուած զատուած էր: Անոնք կ'ըսէին.

— Անիկա բազմաթիւ պատերազմներ ըրած է և վէրք մը անզամ առած չէ, նետ մը անզամ դպած չէ անոր. ի՞նչպէս կրնայ մեռած ըլլալ: Անպատճառ յարութիւն կ'առնէ ան:

Սյս ըսելով գլուխը մարմինին կտրել տուին և հանեցին տանիքը, և կ'ըսէին.

— Որովհետեւ քաջ մարդ մըն էր, Առլէզներ կ'իջնեն կը լիզեն անոր վէրքերը և կը ողջնեն զայն:

Բայց քանի մը օր ետքը իջեցուցին և մէծ սուզ բռնեցին ու թազեցին: Բոլոր Հայերը լացին անոր վրայ:

ՀԱՐՑՈՒՌԱՆ. — Հայոց սպարապետը ո՞վ էր. — Մուտելի ի՞նչ քառ Պարսից քազաւորին. — Անոր կիներն ի՞նչ քառ. — Ո՞վ էր Թունայք. Մուտելի ի՞նչ քառ և քառ անոր. — Նախանձներէն թէլադրուած Պապ ի՞նչ քառ Մուտեղին. — Մուտելի ի՞նչ պատախանեց, — ի՞նչպէս մեռաւ. — Իր բնանին ի՞նչ կ'ըսէին և ի՞նչ դրին:



ԼԲ. ԴԱՍ

ՎԱՐԱԶԴՐԱՏ


Հայոց Պապ թագաւորն աղգական մ'ունէր, որուն անունն էր Վարազդրատ: Դեռ փոքր տղայ էր Վարազդրատ, երբ Յոյներու թագաւորին մօտ գնաց: Քաջ էր և շատ կորովի կերպով նետ կը նետէր: Նա նշանաւոր եղած էր իր քայութիւններով: Կատարեալ կտրիճ մըն էր ան:

Անզամ մը Վարազդրատ պատերազմի գնաց Յոյներու զինուորներուն հետ. Յոյներու թըշնամիները հսկայ, անզութ և քաջ մարդիկ էին, անոնք կը կոչուէին Լոնդոնացիներ:

Կուիւի միջոցին Վարազդրատ նետուեցաւ առաջ: Բազմաթիւ թշնամիներ անմիջապէս Վարազդրատի շուրջը բռնեցին: Անոնցմէ հինգ հազիր խոշոր մարդեր էին, սուր դանակներով և վահաններով զինուած էին և յարձակեցան Վարազդրատի վրայ: Քիչ մնաց սպաննէին զայն:

Բայց Վարազդրատ յանկարծ նետուեցաւ և մէկիկ մէկիկ հինգն ալ սպաննեց: Թշնամիները անոր այս քաջութիւնը տեսնելով սարսափեցան և սկսան փախչիւ դէպի բերդերը: Վարազդրատ սուրաց անոնց ետևէն: ՅարձակեՎարազդրատ սուրաց անոնց ետևէն:


ցաւ բերդի մը վրայ և տասնըեօթը հոգի եւ տեէ ետև նետահար սպաննեց և ինքը ոչ մէկ դժուարութիւն կրեց:



Վարազդաս կ'սպաննէ 5 Լոմբարտացիները
երբ Յոյներու թագաւորը իմացաւ թէ վա-
րազդաս Հայոց Պապ թագաւորին ազգականնէ,
շատ ուրախացաւ և պատուեց զայն։ Պապի
մեռնելէն ետքը Հայոց թագաւոր պատկեց
Վարազդասը։

Նա թագաւոր ըլլալէն յետոյ ճամբայ եւ
լաւ դէպի Հայաստան։ Ճամբան հանդիպեցաւ
բազմաթիւ աւազակներու, որոնք ուղեցին զին-

քը կողոպտել։ Վարազդասի հետ գտնուողնե-



Եփրաւ գետը, որուն վրայէն ցատկեց Վարազդաս
ըէն մէկ քանիին ունեցածները առին և սկսան
վախչիւ։

Քաջ վարազդատը անմիջապէս յարձակեցաւ անոնց ետեւէն ու վազեց մինչև Եփրատ գետին եղերքը: Աւազակները գետին կամուրջէն անցան ու կամուրջին փայտերը քանդեցին, որպէսզի իրենց ետեւէն չկարենան գալ:

Վարազդատ այս բանը տեսնելով բարկացաւ և մէկ ոստումով գետին մէկ կողմէն միւսը ցատկեց: Թշնամիները երբ տեսան անոր այս քաջութիւնը, սարսափեցան, իրենց դողցած բաները թողոցին և փախան:

Ան Հայաստան եկաւ ու թագաւոր եղաւ:

ՀՈՅՑՈՐԾՈՒՅՆ. — Ո՞վ էր Վարազդատ. — Ո՞չ կը գտնուէր. — Լոմբարտացիներն ի՞նչ րու. — Քանի՞ նոզի սպանեց ետեւէ ետեւ. — Յոյներուն բազաւոր ի՞նչպէտ վարեաւեց անոր բազուրին. — Ճամբան որո՞նց հանդիպեցու. — Աւագակներն ի՞նչ ըստ Եփրատի կամուրջը. — Վարազդատ ի՞նչ րու:




Լ. Գ. Դ. Ա.

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Ս. Ներսէս ամուսնացած և որդի մը ունեցած էր որուն անունն էր Սահակ: Սահակ բարի, աղնիւ և խելացի տղայ մըն էր: Նա իր մանկութիւնը անցուց կեսարիայի և Պոլիսի

մէջ: Գնաց գպլրոցներ, ուսաւ յունարէն լեզուն Յունարէնը Հայերենի պէս կը խօսէր և կը գըրէր: Ան սորվեցաւ նաեւ ուրիշ լեզուներ ինչ պէս՝ ասորերէն և պարսկերէն: Սորվեցաւ ուրիշ շատ բան:



Ս. Սահակ պարիւ

Յոյներուն գպլրոցներուն մէջ այնչափ նըշանաւոր եղաւ որ յոյն ուսուցիչները զայն կը գովէին և իրենց յոյն աշակերտներուն կ'ըսէին.

— Տեսէք, Սահակը հայ է բայց յոյնէ մը
աւելի աղէկ կը պատրաստէ իր գոսերը. նայե-
ցէք և օրինակ առէք անկէ :

Յոյն դպրոցներէն ընթացաւարտ ելնելէն
ետք, Սահակ երկար ժամանակ մնաց Բիւղան-
դիոն: Յոյն արքայի պալատին մէջ մեծ պա-
տիւներ ու կարեռը պաշտօններ ստացաւ:

Սահակ ամուսնացաւ ազնիւ, համեստ աղ-
ջկայ մը հետ: Աւնեցաւ սիրուն դատրիկ մը Սա-
հականոյց անուն:

Երբ Ս. Ներսէս մեռաւ, Հայոց թագաւորը,
նախարարները և ժողովուրդը փափաքեցան Ս.
Ներսէսի յաջորդ կարգել անոր որդին Սահակը:
Փառաւորապէս կաթողիկոս օծուեցաւ ան և նըս-
տաւ հայրապետական աթոռը: Հօրը նման սկը-
սաւ խնամել իր հօտը. իր հօրը նման ամէն-
քէն սիրուեցաւ: Թագաւորն ու իշխաններն ան-
դամ զայն կը յարգէին:

Պարսից թագաւորը չէր սիրէր Սահակը, զի
Յոյներուն բարեկամ էր ան: Օր մը Պարսից թա-
գաւորին մօտ գնաց և անոր առջե ելաւ: Իր բար-
ձը հասակը, գեղեցիկ գէմքը և սպիտակ մօ-
րուքը պատկառանք կ'աղդէին: Ան կանգնեցաւ
թագաւորին առջե, սկսաւ պարակերէն խօսիլ:
Այնքան գեղեցիկ և խելացի խօսեցաւ, որ թա-

գաւորը զարմացաւ: Ս. Սահակ ըստ անոր.

— Տէ՛ր արքայ, սուտ զրպարառութիւններու
աւանջ մի՛ կախերը: Մենք Հայերս քեզի թլշ-
նամի չենք: Եթէ ազատ ձգես մեր կրօնը, մենք
քու բարեկամդ կ'ըլլանք, մեր քաջերը կը կըռ-
ուին քեզի համար:

Ուրիշ շատ խոհական խօսքեր ըրաւ եւ մեծ
պատիւներ ստացաւ: Թագաւորը հրաման հանեց
որ Սահակն ու անոր գերդաստանը յարգեն,
Հայերուն աղէկ աշքով նային ու չհալածեն:

Ս. Սահակ նշանաւոր գործ մըն աւ ըրաւ.
քաջալերեց Ս. Մեսրոպը որ հայերէն գիրերը
գտնէ: Մենք՝ Հայերս տակաւին այլուրեն չու-
նէինք:

Ան ուրիշ օգտակար գործեր աւ ըրաւ եւ խոր
ծերութեան մէջ մեռաւ: Բոլոր Հայերը սուդ
բռնեցին ու լացին անոր համար:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ո՞վ եր Ս. Սահակ. — Եր Մանկուրինը
ո՞ւր անցուց . — Եր աղջկան անունն ի՞նչ եր. — Պարսից թագա-
ւորին ի՞նչ խօսեցաւ . — Ի՞նչ պատիւներ սացաւ. — Ուրիշ ի՞նչ
հօանաւոր զորդ բռաւ:



Լ. Դ. Ա. Ս

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇԹՈՅ

Ս. ՄԵԽՐՈՎ Մաքրոց Սահակի նման նշա-



Հայոց մեծ վարդապետը Ս. Մեխրով
նաւոր եղաւ։ Ան բարի ծնողքի մը զաւակն էր։
Անոր հօրը անունն էր Վարդան։ Նա պղտիկուց

ուսումնասէր, բարի տղայ մընէր, կ'ուզէր շատ
բան սորվիլ։

Իր աշխատասիրութեամբ շատ առաջ գնաց։
Ուսաւ ասորերէն, պարսկերէն եւ յոնարէն լեւ
զուները։ Երբ որ դպրոցէն ելաւ, զինուոր եղաւ։
Որովհետեւ կրթուած էր եւ լեզու զիտէր, պա-
տիւ վաստկեցաւ, եւ օր մըն ալ հայոց թագա-
ւորին քարտուղար եղաւ։

Ս. Մեսրոպ կը փափաքէր վարդապետ ըլլալ
եւ հրաժարեցաւ իր պաշտօնէն։ Բայց անոր
տեղ մէկը չկար որ անոր զործը իրեն չափ տ-
ղէկ կատարէր։

Ան վարդապետ ձեռնազրուեցաւ։ Սահակի
նման միշտ ազօթքի ետեւէն էր եւ ունէր աշա-
կերաներ։

Ան տեսնելով որ մենք Հայերս զիր չու-
նինք, շատ տրամեցաւ, մինչեւ այդ ժամանակ
Հայերը եթէ նամակ կամ զիր զրէին, կամ յու-
նարէն, կամ պարսկերէն եւ կամ ասորերէն կը
զրէին։ Բայց մեր պապերէն շատերը շէին հաս-
կնար այդ լեզուները։ Եկեղեցին ազօթքներն
անզամ ասորերէն կամ յունարէն լեզուներով
կը կատարէին։

Ան խորհեցաւ հայերէն զիրեր զանել, որ
զոնէ եկեղեցիներուն մէջ հայերէն կարդան եւ

աղօթեն: իր մտածումը յայտնեց Ս. Սահակին, որ շատ ուրախացաւ: Երկուքը մէկ գացցին Հայոց Վռամշապուհ թագաւորին քով: Ա. Սահակը ըստ:

— Տէր արքայ, տե՛ս, Մեսրոպ վարդապետը խորհերէ է հայերէն զիր հնարել: Եթէ այս բանը յաջողի շատ օգտակար պիտի ըլլայ մեր ազգին:

Վռամշապուհ թագաւորը շատ ուրախ եղաւ որ իր թագաւորութեան օրով Ս. Մեսրոպի պէս մէկը հայերէն զիր զանելու զազափարը ունեցերէ: Ինքը՝ թագաւորն ալ սկսաւ աշխատիլ:

Անոնք շատ աշխատեցան, հայերէն զիրեր զանելու համար, բայց անօգուտ եղաւ: Ս. Մեսրոպ երկար ճամբորդութիւններ ըրաւ, Հայաստանէն զուրս շատ երկիրներ պատեցաւ, բազմաթիւ զրատուններ այցելեց և հայերէն զիրով զրուած զիրք փնտոեց, բայց չգտաւ:

Նա զիշեր ցորեկ կը մտածէր թէ ի՞նչպէս ընէ որ հայերէն զիր զանէ: Օր մը տրատոմ տըխուր նստած էր ան և Աստուծմէ կը ինզրէր որ օգնէ իրեն, որով հետեւ յուսահատած էր:

Այդ տիսուր վիճակին մէջ քունը տանելու պէս եղաւ: Իրեն այնպէս երեցաւ որ երկինքն

ձեռք մը եկեր քարի մը վրայ կը զրէր հայերէն այբուբենը:

Յանկարծ արթնցաւ հասկցաւ որ կէս քունի մէջ էր: Գրուած զիրերուն ձեւը իր մտքին մէջ էր: Անմիջապէս առաւ փետուրէ զրիչը, թուղթը ձեռք առաւ ու, շնորհակալ ըլլալով Աստուծոյ, սկսաւ մէկիկ մէկիկ զրել հայ Ա. Բ. Գ. ը:

Անկէ ետքը սկսաւ իր զտած զիրերով թարգմանել Աստուածաշունչը: Եւ տեսաւ որ աղէկ էր: Այդ ժամանակ ինքը Հայաստանէն զուրս կը զտնուէր. երբ զիրերը հնարեց, ճամբայ ելաւ հայրենիք զառնալու համար:


Վռամշապուհ թագաւորը և Պարթեւ հայրեն պետը երբ լսեցին որ մեծ վարզապետը հայերէն պիտերը զտած կուգայ, ճամբայ ելնելով անոր զիրերը զտած կուգայ, ճամբայ ելնելով առջեւը ելան: Իրարու հանդիպելով համբուրուեցան եւ ուրախացան զիրերը զտնուած ըլլալուն համար:

Անկէ յետոյ շատ զպրոցներ բացին, բազմաթիւ տղաքներ հաւաքեցին և անոնց սորվեցուցին հայերէն նոր զիրերը եւ լեզուն: Այդ աշակերտները ամէնքն ալ նշանաւոր մարդեր եղան. իրենց ուսուցիչներուն պէս իրենք ալ աշխատեցան, շատ յունարէն եւ ասորերէն զիրքեր թարգմանեցին, շատ հայերէն զիրքեր գրեցին:

Ա. Պ. Պ. Ա. Ա.

Ս. Զ. Է. Խ. Ա. Ե. Բ. Է. Հ. Յ.

Ա. յ. ժ. ամանակ զեղեցիկ եւ լուսաւոր շրջան
մը եղաւ եւ կոչուեցաւ նախքար:



Օսմանի Ս. Մեսրոպ Եկեղեցին, ուր կը գտնուի
Տարօնի մեծ Վարդապետին գերեզմանը

Երբ Ս. Մեսրոպ մեռաւ, բոլոր հայ ժողովը սուզ բռնեց: Անոր զերեզմանին վրայ ե-
կեղեցի շինեցին և ամէն տարի ուխտի կ'եր-
թային: Այդ եկեղեցին ու զերեզմանը մինչեւ
հիմակ կայ, կը դանուի Օսման զիւղին մէջ, ո՛
կ'ջմիածինի մօտն է:

ՀԱՐՅԱՐԱՆ. — Ո՞վ էր եւ որո՞ւ որդի էր Ս. Մեսրոպ. — Ան-
ի՞նչ պատճեն առաւ. — Հայեր զիր ու նելի՞ն. — ի՞նչ զիր կը զործա-
ծէին. — Հայերէն զիրերն ի՞նչպէս զաւ Ս. Մեսրոպ եւ ո՞ւր. — Հա-
յասան դառնալով ի՞նչ բրաւ. — Երբ մեռաւ ո՞ւր բազւեցաւ:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի աշակերտներէն
մէկն էր Ս. Ղետոնդ Երէց, որ հայրենասէր ու շատ
նշանաւոր մարդ մըն էր: Ան համեստ ձնողքի
մը զաւակն էր: Իր փոքր եղած ատենն աւ շատ
բարի, ազնիւ ու խելացի էր:


Աշխատելով սորվեցաւ յունարէն, ասորերէն
եւ պարակերէն լեզուները: Այնքան զեղեցիկ կը
խօսէր, այքան պարզ եւ հասկնալի կերպով կը
խօսէր, որ ամէնքը կը հիանային:

Ան զնաց Պոլիս, ուր յոյն դպրոցներուն մէջ
աշխատեցաւ նոր նոր բաներ ուսանիլ, ապա զար-
ձաւ Հայաստան: Ղետոնդ քահանայ ձեռնազրուե-
ցաւ եւ սկսաւ մխիթարել ժողովուրզը: Անոր նը-
շանաւոր գործերէն մէկը պիտի պատմեմ:

Հայերն իրենց կուիւներով, զիրար չսիրելով
ակարացած էին, այդ պատճառով պարսիկ թա-
գառորը Հայաստան արշաւելով մերերկիրն իր
իշխանութեան տակ առաւ. մեր Արշակունի թա-
գառորը զահէն ձգեց եւ տեղն ուրիշ մը շղթաւ:

Պարսիկներու թագաւորը կ'ուղէր որ Հայերը
քրիստոնեայ չըլլան, այլ իրենց պէս կըակը

պաշտեն։ Ասոր համար, օր մը նամակ մը գրեց
հայ նախարարներուն եւ ըստւ .



Ս. Պետինդ Երեց

— Որոշած եմ պատերազմի երթաւ իմ եր-
կրին արեւելեան կողմը գտնուած մեր թշնա-
միներուն զէմ։ Այս նամակս առնելնուդ պէս ա-
ռանց զանգազելու շուտ մը ձիաւոր զօրքեր ժող-
ուանց պահապետ ու եկեղեցին մէջ համար եւ լու-
լէս առաջ։

Նախարարները, որովհետեւ աիրասէր էին,
շուտավ պատրաստուեցան և ճամբայ եւան :
Ետ զոհ մնաց պարսիկ թագաւորը։ Կոխուին
մէջ հայ քաջերը յաղթեցին թշնամիին։

Թագաւորը ուրիշ աղղեցիկ մեծ նախարար-
ներ ալ իր մօտ կանչեց Հայաստանէն։ Անոնք
գացին։ Թագաւորը հրաման ըրաւ որ բոլոր հայ
նախարարներն ու զինուորները ուրանան իրենց
կրօնքը եւ կրակը պաշտեն։ Նախարարները չըն-
դունեցին. Թագաւորը բարկացաւ եւ ըստւ .

— Քանի որ ձեր կրօքը չէք ուրանար, ձեզ
հոս վար պիտի զնեմ, պիտի չարչարեմ եւ մեռ-
ցնեմ. մէկ կողմէն ալ ձեր երկիրը պարսիկ զօրք
յունեմ. մէկ կողմէն ալ ձեր եկեղեցիները կործանեն,
պիտի զրկեմ որ ձեր եկեղեցիները կործանեն,
ձեր կիներն ու աղջիկներն սպաննեն կամ զե-
րի բոնեն. ձեր երկիրը աւերակ պիտի զարձը-
նեմ։

Հայ նախարարները երբ լուցին այս խօս-
քերը չափազանց տիրեցան. Գիտէին որ թագա-
ւորը իր ըստածները կրնար զործադրել։ Ռւստի-
ուրուցեցին երեսանց ուրանաւ իրենց կրօնը. ի-
ւրենց մէջէն մէկը զրկեցին թագաւորին եւ ը-
սին անոր .

— Տէր արքայ, մենք պատրաստ ենք պաշ-
տեւու կրակը։

Թագաւորը շատ ուրախացաւ։ Փառաւոր կը-
րակ մը վառել տուաւ. մեծ պատրաստոթիւն-
ներ տեսաւ եւ սկսաւ ազօթել մեհեանին մէջ։

Ապա ճոխ հացկերոյթ մը տուաւ անոնց։
Նշաններ, պատիւներ, թանկագին ընծաներնուի-
րեց։ Անոնց տուաւ բազմաթիւ մոգեր, որպէսզի
երթան եկեղեցիները կործանեն ու կրակի տա-
ճարներ կանգնեն։ Նախարարները մեծ խումբով
ճամբար ինկան։ Տակաւին Հայաստան մտած չէ-
ին, առջեւէ լուր զնաց թէ ահա ուրացող իշ-
խանները մոգերու հետ կուզան։

Բոլոր ժողովուրդը ոտք ելաւ, յուզուեցաւ։
Զէին ուզեր իրենց կրօնքը ուրանալ։ «Զե՞նք ըն-
դունիր, չե՞նք ընդունիր,» կ'ըսէին իրարու։ Ու-
րացողներուն կիները, աղջիկնեն ու տղաքներն
անզամ ոտք ելած էին եւ չէին ուզեր ընդունիւ
իրենց ամուսինը կամ հայրը։

Ղեւոնդ երէցն ալ սաստիկ բարկացաւ։ Ան-
չէր զիտեր թէ իշխանները կեզծ ուրացած էին։
Առաւ իրեն հետ շատ մը եկեղեցականներ, ժո-
ղովուրդ եւ զնաց անոնց առջեւ։

Պարսիկ սահմանագլուխին մօտ զիւզ մը
կար որ կը կոչուէր Անգլ, Գացին եկեղեցի, պա-
տարագին քարոզ մը խօսեցաւ, բորբոքեց ա-
մէնուն սիրտերը, եւ բոլորը մէկ զուրս ելանե-

եկեղեցիէն, գոռալով, բարկանալով, մէյմէկ
փայտ, կացին ու գանակ առած զացին յարձա-
կեցան մոգերուն վրայ։ Մոգպետին գլուխը
պատռեցին, շատերուն վնասեցին ու փախցու-
ցին։

Մոգպետը նախարարներուն զնաց և ըստ.
— Ես չեմ դար, ետ կը դառնամ։ Հայերն
իրենց կրօնը չեն ուրանար։ Եթէ այս փոքրիկ
կիւղին մէջ այսպէս ըրին, հապա միւս գիւ-
ղերն ու քաղաքներն ի՞նչ պիտի ընեն։ Կ'եր-
թամ կը խօսիմ մեր թագաւորին որ Հայերու
կրօնքին չդպչէի։

Մոգերը ետ դարձան. իսկ նախարարները
զացին եկեղեցի եւ հազորդուեցան, յայտնեցին
թէ իրենք կեղծ ուրացած էին։ Անոնք ուխտե-
ցին իրենց կրօնքն ու երկիրը պաշտպանել,
մեռնիլն անզամ աչք առնելով։

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ո՞վ էր Ս. Դեւոնդ. — Պարսիկ բազաւո-
ր ի՞նչպէս իր իշխանության տակ առաւ Հայաստան։ — Ի՞նչ
որ ի՞նչպէս իր իշխանության տակ առաւ Հայաստան։ — Ի՞նչ
որ ի՞նչպէս իր իշխանության տակ առաւ Հայաստան։ — Ի՞նչ
որ ի՞նչպէս իր իշխանության տակ առաւ Հայաստան։ — Ս. Դեւոնդ ի՞նչ ըրտ։ — Սովորական ի՞նչ ըրտ։



Լ. Գ. Դ. Ա.

ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ

Ս. Սահակ Հայրապետին Սահականոյշաղ-
ջիկը երեք որդի ունէր, որոնցմէ մէկին անունն
էր Վարդան: Փռքը իկ Վարդանը մեծ Հայրա-
պետին սիրականն էր. անոր ձեռքը մեծցած
ու կրթուած էր: Անկէ սորված էր յունարէն,
պարսկերէն եւ Հայերէն:

Վարդան մեծնալով եղաւ կրօնասէր եւ քաջ
մէկը: Ան կը կռուէր իր Հայրենիքը Փրկելու Հա-
մար թշնամիներու ձեռքէն: Բազմաթիւ թշ-
նամիներու դէմ կռիւ մղած էր ան, ամէնուն ալ
յաղթած էր եւ ինքը չէր վնասուած:

Մոգերու զլուխը ջարդելէն ետքը, միւս
նախարարներուն հետ մեկտեղ ուխտ ըրաւ ան
պատերազմիլ Պարսիկներուն դէմ, կամ յաղ-
թել եւ կամ մեռնիլ կրօնքի եւ Հայրենիքի
համար:

Ան սկսաւ կարգի դնել Հայ զինուորնե-
րը, որոնք 60 հազար հոգի էին: Յանկարծ Լուր
եկաւ թէ Հայաստանի հիւսիսային կողմը գըտ-
նուած քրիստոնեայ երկիրը ստնակու կ'ընեն
պարսիկ զինուորները: Վարդան անմիջապէս ա-

ռաւ բաւական զօրք եւ զնաց Պարսից դէմ:
Կռիւը տեղի ոնեցաւ կռւը գետին եղեր-
քը: Պարսիկները մէկէն ի մէկ յարձակեցան



Քաջն Վարդան Մամիկոնեան
Վարդանի զինուորներուն վրայ, բայց Վար-
դան այնպիսի քաջութիւնով կռուեցաւ, որ
թշնամիները ապշեցան, անոնց մէկ մասը ջար-
թուեցաւ, մէկ մասը կռւը գետը թափուեցաւ
և միւս մասն ալ փախաւ:

Պարսիկներուն թագաւորը այս բոլորը լը-
մելով սաստիկ բարկացաւ և ահազին թիւով
զինուորներ հաւաքեց. անոնց հետ պատերազ-
մինուորներ

մական փիղեր դրաւ և Հայաստան զրկեց:

Հայերը աս լսելով փոխանակ տրտմելու աւելի ուրախացան. Հայրենիքի սիրով վառեցան: Պատրաստուեցան պատերազմի:

Վարդան հայ բանակին առաջնորդն էր, Ղեւոնդ Երեց անոր հետ: Կոփէն առաջ Ս. Ղեւոնդ և Քաջն Վարդան կրակոտ ճառեր խօսեցան զինուորներուն: Վարդան ըստւ.

— Ես մտած եմ շատ պատերազմներու մէջ, դուք ալ իմ հետս, մենք շատ անգամ յաղթեցինք: Ով որ փախչէր վատկը կ'ոչէինք, հապա հիմակ: Չվախնանք անոնց սուրերէն: Կամ յաղթենք, կամ մեռնինք քաջի պէս:

Այս տեսակ խօսքերով քաջալերեց, վառեց ամէնքն ալ, որոնք նետուեցան առաջ, յարձակեցան թշնամի բանակին վրայ: Ամէն կողմ արիւն, թշնամիները գետին կը փոռւէին: Պարսից զօրապետը տեսնելով որ այլևս պիտի չկրնայ դիմանալ, սկսաւ հրաման ընել որ իր զինուորները ետ քաշուին:

Բայց այդ միջոցին ուրացող, Հայրենիքը չսիրող և վատ նախարարները, իրենց զինուորներով, թշնամիին կողմն անցան:

Այն տեսն Պարսիկները դարձեալ սկսան յարձակիւ Հայ ուխտապահներան վրայի Այս

այսութեան մէջ թշնամի աւ Փաջ վարդանի կուրծքը ծակեց: Աս փառք տալով Աստուծոյ հոգին աւանդեց: Հայերուն սուգը մէծ ու խորունկ էր: Իրենց առաջնորդն ու զլուխը մեռնելն յետոյ ա'ւ չկրցան պատերազմիւ ու ետ քաշուեցան: Այդ կոռուին մէջ Հայերուն կողմէ նահատակուեցան 1036 հոգի, իսկ թշնամիներէն մեռն 3500 հոգին աւելի:

Հայերը յաղթուեցան, բայց Պարսից թագուորը հասկցաւ որ այլևս անկարելի էր որ Հայերն ուրանային իրենց կրօնքը:

ՀԱՐՑԱՐՈՒ. — Վարդան որո՞ւ որդի եր. — Ուրիշ ուսումնական իհնչ ուխտ եւ ո՞ւր յարեց Պարսիկներուն, — Վարդան իհնչ ուխտ եւ ո՞ւր յարեց Պարսիկներուն: — Պարսից բազուորն իհնչ բազ: — Վարդան իհնչ յանուան: — Պարսից ազգաւորը իհնչ տանեցաւ:

ՎԵՐՁ



